К. Лидерман

Шимбаш-Бахр

8.91 99
Д-14

776
- 14

2 FEB 2014

ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ

Նոր-Բայազետի բարբառով

Գրի առաւ
Ե. ԼԱԼԱՅԵԱՆ

ԱՐՏԱՏՊԱՏ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻՑ

ԹԻՖԼԻՍ 1906
Տպարան „ՀԱՅՐԵՆԻՔ" Մարքիսեան փող. 5.
(101)

891.99
- 14

01·99
L-14

ՍԱՍՈՒՆՑԻ ԾՌԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊ

Նոր-Բայազետի բարբառով

Գրի առաւ

Ե. ԼԱՒԱՅԵԱՆ

ԱՐՏԱՏՊԱՏ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻՑ

ԹԻՖԼԻՍ

Էջմիածնայի Տպարանի «ՀԱՅՐԵՆԻՔ», Ընկ. Մաղաքեանի փող. № 5

1906 (151)

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Апрѣля 1906 г.

214
39

ՍԱՍՄԱՑ ԾՌԵՐ

(Նոր-Բայազէտի քաջքառով)

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ներկայ ժողովրդական վէպը ես գրի առայ այս ամառ (1905 թ. մայիսին) Նոր-Բայազէտի Ղըշլաղ գիւղում։ Պատմողն էր նոյն գիւղացի Առաքել Շակոյեան փարտուհատեայ ծերունին։ Ծա այս վէպը սովորել է իր հօրից եւ աւագ եղբօրից, որոնք գաղթել էին Ղըշլաղ 1828 թուին Հին Բայազէտի Բարաթեաք գիւղից, ուր վերաբնակել էր սրանց պապը Դիրամից։ Առաքելը, իր ասելով, այս վէպը միխանի անգամ լսել է նաեւ Նոր-Բայազէտի գաւառի Բաշքեանս գիւղի մշեցի Աղբարից, որ հոչակուած էր այս կողմերում որպէս լաւ հեքիաթ ասող։ Քանի եւ հինգ տարուց ասելի է, ինչ նա վախճանուած է, սակայն հեքիաթասէր ժողովուրդը մեծ յարգանքով դեռ եւս յիշում է նրան։ Առաքելը անգրագէտ է, վատ յիշողութեան տէր, աշխոյժ եւ կրակոտ։ Նա պարապում է երկրագործութեամբ, եւ ժամանակները, ազատ ժամերին, հեքիաթներ պատմում։ Նախ սկսում է զածր ձայնով, բայց յետոյ հետզհետէ բարձրանալով՝ աւարտում է բղաւելով։ Նրա ձայնը շատ հնում է տարածում, մանաւանդ երբ հիշատակում է քաջարի հերոսների կռիւը։ Այսպէս ուրեմն, Առաքելը, ժողովրդի

հեռ միասին, ուժի զաղափարը ներարգելիս՝ դիմում է նաև ձայնի ուժեղությանն օժանդակությանն:

«Սասնոյ Ծռերը» իւրաքանչիւր նաև Քիւռանչը գիրքում կայր եւ փոքր ինչ խում՝ ծերունի Գրիգոր Բարոյեանը, որ նոյնպէս անգրագէտ է: Եւ որոշեցաւ սա այս վէպը սովորել էր Երանոյի Երգիչներից Յակոբից, որ ամբողջ գարնանում մեծ հոչակ ունի որպէս նշանաւոր հեքիաթ ասող, ուստի եւ էս շատագոյ վէպի բովանդակութիւնը միայն նշանակելով, որպէսզի յետոյ, երբ նրա վարպետից գրի առնեմ վէպը, կարողանամ սրա հետ համեմատել: Երանոսում էս տեսայ Երգիչներից Յակոբին, որը յիրաւի, մի պերճախօս, աշխոյժ անձնաւորութիւն է եւ շատ բան գիտէ: Միայն, դժբաղդաբար, գրագէտ է, բառակսան գրեր կարդացած եւ զգալի ու նոյն իսկ անհանգիստ կերպով իր հայեացքներն ու բնաւորութիւնները վերցրնում պատմած վէպի մէջ. նեղուն էլ գրակատարմամբ Աղաշիերի քարքառն է, ուստի է՛ւ էս չկամենայ նրանից գրի առնել այս միանոյն վէպը, մանաւանդ որ նա էլ Բաշինցի նոյն Աղաշից է սովորել:

Մի այս երեքի եւ թէ այլ հեքիաթ ասողների շնորհիւ «Սասնոյ Ծռերի» վէպը Նոր-Բայազէտի գաւառի թէ՛ բայազէտցի եւ՝ թէ արարատցի գիւղացիների մէջ բառակսան տարածուած է:

Դամանակով Պապ թագաւոր կար, էտու Նստուած տեղը Կապուտկոդն էր։ Մարը քաղաքն էլ մէ կոապաշտ թագաւոր էր նստուկ։ Էդ կոապաշտ թագաւորը գլուխը վեկալում ա, գալըմ ա Կապուտկոդը՝ մեր Պապ թագաւորի վրայ կռիւ։ Պապ թագաւորի խետը կռիւ ա անում ա, Պապ թագաւորի զօրքը ջարդում ա, ետիր ա տանում ա։ Ետիր ա տանըմ, էն ինչոր մանդը էրեխէքն ա՝ լցում ա տլի մէջ, կոխրճում են, մանդը մխը լցում տլի մէջ, էրեխէքը տալրմ կոխրճել, սպանել ա տալըմ. էն ինչոր դարթքն (մեծ) ա՝ էն վախտը տախտակը չորս դեխից ծակում ա, չորս մարդու գլուխ կոխում են տախտակի մէջը։ Յինքը հլնում ա վրէն նստում ա, ետ նա էս խետ որ յինքը հլնում վրէն նստըմ ա, յուսերը ծակրտում ա, փչանում են։ Էտենցով Ալայ ազգին փչացրեց։ Հելաւ ատ ժամանակ քաշեց, հելաւ որ Պապ թագաւորին մէ հատ աղջիկ։ Յինքը Փիրզատ—խանըմ։ Էդ աղջիկը տասերկու տարեկան հելաւ, էտի շատ խորոտատես էր։ Էտու ձէնը գնաց հնկաւ կոապաշտ թագաւորին։ Կոապաշտ թագաւորը յիրան վազիրներին դանչեց (կանչեց) ասաւ, թէ Պապ թագաւորին մէկ խորոտատես աղջիկ կայ, Էտու համար միտք արեր էմ որ ուզեմ իմ Փաշա տղին։ Տուեց՝ տուեց, թէ չտուեց՝ իր թագը մտէն առնեմ Հայաստուն կտրեմ, Էտունց ազգը փչացնեմ, էտունց ազգը գաթի էտով ա փչացէր։ Հելաւ որ յիրան վազիրն ու վազիրը յղրկեց Պապ թագաւորի կուշտը, աղջիկն ուզելու, էտոնք Պապ թագաւորին ասին. «Քո աղջիկդ բեր

աւուր կռապաշտ թագաւորի տգին»։ Գալ թագաւորը վեկալեց յիրան յալա վաքիլ վագիրին ասաւ, թէ ինչ էք ասում էք, իմ աղջիկը էս կռապաշտը ուզում ա, մկա մեր հայ ազգին լայեղ չէ, որ կռապաշտին հայ աղջիկ տանք։ Էտ բոլոր իշխանները ասին. Թագաւոր, աղջիկը քոնն ա, կըտաս՝ դու գիդաս, չես տայ՝ դու գիդաւ Էնտուց յետի, վեկալեց ասաւ, որ չտամ մի խեստ մեր Հայաստունը կը բրդայ, քոքը կը կտրայ. հէլաւ աղջկանը ասաւ, էս հմմէնը քեզի կապուած են, որ դու կռապաշտին չառնես՝ իմ թախտը իմ ձեռնէն կռապաշտը կառնի։ Էնդուց դէն աղջիկը ասաւ, թէ ես իմ հայոց հաւատը չեմ կուրցնի. ես ոչ կտառնեմ ոչ էլ հէրն ասաւ. ռՃարի իմ վիզը դարկ. որ դու չառնես՝ մեր բանը փիս գլնի»։ հրնկաւ ադաչանը։ Էտուց յետը աղջիկը փոշմեաւ, ասաւ, որ տայրմ ես՝ ուր։ Էկաւ կռապաշտի վագիրին՝ ասաւ, թէ մէկ աղջիկ ա՝ դուրբան հընի թագաւորին։ Ընտուց յետը հելաւ էդ վտղիրը թագաւորին ջուղար տարաւ։ Էդ աղջկանը մէ ադրեր կար անունը Թորոս էր, յինքը շատ հնարագէտ մարդ էր, էտի հելաւ յիրա հորը, թագաւոր, ասաւ, յարի թագաւորին մէ պայման դնենք, թէ մեր աղջիկը պստիկ ա, խրնդրում ենք մէ տասվերկու տարի ժամանակ տաս, որ մեր աղջիկը բէտնայ։ Էն էլ ասաւ, թող Ճեայ։ Էտու յետեր մէ տարի նշանլու Ճեաց։ Աղջիկը կայնաւ միտք արաւ, ասաւ, լաւն էն ա, որ ես էթամ ընձի սրպանեմ, չէթամ կըռապաշտն առնեմ, իմ լուս հաւատը չկուրցնեմ։ Էտ աղջիկը վեր կացաւ լուս բացուելու ժամանակ յելաւ դնաց յիրանց սարը. գընաց որ յինքն յիրան սպանէր։ Գնաց տեսաւ՝ որ մէկ խաչքար ընդե տնկուկ էր։ Զորաւ ադօթք արաւ. յիրան Աստուած ապրուստնեց, արտըսունք շատ թափեց յաչքերից։ Մէկ էլ յլրիշկաց տեսաւ որ մէկ դար կար կշտի խեստ։ Տեսաւ որ մէկ դուռ բաց հելաւ, գնաց տեսաւ՝ որ մասունք կար էտու մէջ. մասաւ մէջն ադօթք արաւ։ Ամրան օր էր, ծարվրցաւ, գնաց տեսաւ, որ յառքից ջուր էր գալըմ։ Գնաց յիրեք ճանկ ջուր խմաւ, էսն սիրտը շատ պընգաւ, յետ գարձաւ հելաւ դուրս, էն դուռը փակուաւ, յինքը դարձաւ եկաւ յիրան տեղը։ Քաշից վեց ամիս՝ էրեխէն փորի մէջը մայրմ արաւ. ջառիէքը (ադախին) խաբար տարան մօրը, թէ ադջիկդ ե-բեխով աւ։ Էկաւ մէրը տեսաւ, որ աղջիկը էրեխով ա, փորը լիքն ա, մէ դրրբ դանեց (մի բռունցքով խփեց) աղջկայ գլխէն, ասաւ. Սև գցեմ գլխիդ, մենք գինջրցել ինք, մկա Հայաստուն ուզում ես տաս բրդել—Ինչի խամար եմ տալում եմ բրդել, խարցնում ա աղջիկը մօրը։ Մէրը ասում ա աղջկանը. Դու երեխով ես, կռապաշտ թագաւորը գիմանայ, կրդայ մեզի կրջարդայ։ Էն էլ կը

վեկալայ կասայ. Ես էդ բանի տէրը չեմ, անունը մարդ իմ կուշտը չէկերայ։

—Ա՞ռ որ չեկերայ, էդ էրեխէն յուստ ա։

«Ես որ խոռվեր եմ, հելեր եմ գացեր եմ մեր սարի մէջը, որ ընծի ըսպանի, էտա տեղը մէկ մատուռ կէր, գացի իմ աղօթքն արի, ջուր խմի, էրեխէն էդ ջրից հելաւ, Աստուած իր տեղը, ես իմ տեղն եմ անարատ»։

Հէլաւ էտի գնաց թագաւորին յիմաց բրնց, թէ քո աղջիկըն էրէխով ա։ Թագաւորի խելքը գնաց դիվանի մէջն հնկաւ։ Ցիրա տղայ Թորոսը և էլ յիրա վեզիրը ասին. էդ ինչ հելաւ քեզի։ Ցինքը վեկալեց թէ մեր աղջիկը էրէխով ա հելէ, կռապաշտի թագաւորը կրգայ մեր գլուխը կգանայ։ Ցիր աղէն, Թորոսը, ասաւ, թէ թագաւոր, մեծ ա զորութունը Աստծուն, մի երկուղ արա։ Վերդրեց թագաւորը ասաց. Իմալ երկուղ չանեմ, ախր իմ աղջիկը ճըժոմկէր ա։ կռապաշտ թագաւորը մեր գլուխը կը կտրայ։ Էն էլ վեկալեց ասաւ, թէ կարելի ա, թէ Աստուածուքունը մեզի կամեցել ա։—Ի՞նչ ա լամեցէ։ Թորոսը վէ կալում ա ասում ա, թէ կարելի ա մեր քվորից մէ հատ տղայ հընի՝ կռապաշտին յաղթայ։

Ինն ամիս, ինն օր, ինները սհաթը թըմբմաւ, էդ Փիրգատ—խանըմը պարկաւ մէ տղայ բերեց։ Մէ ամիսը մէ տարուան գէօրա բէտրյաւ (մեծացաւ) էտ տղէն։ Էտի հելաւ մէ տարեկան, տասվերկու տարեկան տղի բատա հելաւ։ Ինչ անուն գնում են, չի վեկալում ա։ Էտ տղէն ա վիր տղի հետ խաղում ա, գանում ա, գլուխն ա ջարգում, ուսն ա ջարգում, յիր հարևանները յիրան Պապին գանգատուր են հընում են, թէ մեր տղերքին ջարգում ա, սրպանում ա։ Ինն էլ վերցնում ա ասում ա յիր տղայ Թորոսին. Դի մէ ձիան վրայ էթա յիրա ընկերների խետ աւ (որս) անայ, սէրը քցայ ձիուն վրայ։ Բերին մէ ձի տուին, հելաւ խէձաւ գնաց աւ անելու, գնաց էլի էն մատուռին թուշ հելաւ։ Ձիան մէջքը թալեց, հնկաւ քիթ ու բերնի վրէն տղէն, ուշքը գնաց։ Հելաւ որ էն մատուռը էկաւ ներաց, ասաւ թէ քու անունը Մհեր ա։ քո մօր արտասունքը հելաւ առ Աստուած, ինչպէստ որ մատադը, Աստուած ա քե տուեր ա։ քու անունը Մհեր ա։ մինա էկէթաս քո Պապ թագաւորին կտես, տասը հատ անձին էրինջ բերայ, գահանէք բերայ, որ պատարագ անեն, մատուռի դուռը բացուի, որ համբիլը գնես ծոցդ, թուրը թալես թեդ, գիւրդն առնես ձեռդ, էթաս կռիւ անես կռապաշտի խետ, որ հայի հաւատը չկորի։ Ֆո ձինը, Ֆուռէկյալաթը (ձիու անունը) հէրի (այրի) մէջն ա, էտի Աստուած քեզի դամաթ արեր ա։ Էտ Մհերը հելաւ գնաց մօր մոտն ու քեռի Թորոսի կուշտը, ասաւ թէ գնացի մատուռի դէմը, ձին մէջքը թալեց, ես ընկայ,

ուշքս գնաց, էրազ տեսայ, թէ քո անունը Մհեր ա, գնա տասը հատ անծին էրինջ բէ մատդա, որ քո մուրազը կատարուի։

—Մէրն ասում ա. Ի՞նչ ա քո մուրազը։

Էն էլ ասում՝ իմ ազէն ասում ա թէ, որ մատդեցիր պրծաս, էն մատդի արնով էրեսդ լուացի, որ քո մուրազդ առնես։ Վեհկալում ասում ա, թէ որ մուրազդ առաս, մատուռիդ դուռը կը բացուի, մատուռի անունը Մայրամ Աստուածածին ա, քո թաքը, քո վակասը, քո գիւրգը, քո համայիլը էնտեղ ա, կրվիրցրնես համայիլը գնես ծոցդ, էն վախտը որ համայիլը դրիր ծոցդ, քամաքը կապէս, թագը գնես գլոխդ, գիւրգն առնես ձեռդ, Քիւրկէջալաթը խնծնես, էթաս քո դուշմնին բրրդես։ Միայ ես էկիրեմ, որ տասը անծին էրինջ տանեմ։ Դուք ինչ էք ասում էք։

Մէրը էթում ա Գասլ թագաւորի կուշտը, ասում ա. Թոռդ էկեր ա, տասը անծին էրինջ ա ուզում ա, որ տանի Մայրամ Աստուածածնին մատդայ։

Էն էլ ասում ա. Թո՛ քաղաքներ տանայ։

Հետոյ Գասլ թագաւորը հրամում ա, շահարի մէջ բռնում ա տալիս. Ցարէք էթանք Մայրամ Աստուածածին, խաչով խաչվառով, գհանով մատաղ անենք։

Էլլիկն էլ ասում ա. Ինչ մատաղ ա։

Վի կայրամ ա ասում ա, թէ մեր Մհերը էրազ ա տեսէ պրտի տանենք մատաղ անենք։

Հրամում են, առնում են քաղաքներ հատ էրինջ, գեղախոիկ էթում են. դազանն էլ խեստ։ Էթում են բնտեռ մատաղ են անում են։ Էն ինչ որ գհանէն ա, պատարագ ա անում ա, էն ինչ որ Մհերն ա՝ մատաղ ա անում ա։ Մատդի արնով յերեսը ջրի տեղ լրում ա, Մայրամ Աստուածածնայ դուռը Աստուծու հրամանով բացում ա, Մհերը մտնում ա ներս, թաքը գնում ա գլոխը, գոտիկը կապում ա մէջքը, գիւրգն առնում ա ձեռը ասում. Էս գիւրգի գլոխը կէս խալվար թուջ հրնի, որ ես էլ տղամարդ հրնիմ, իմ դուվաթը կը յաղթէր կը վերցրնի։ Թորոսը խասաւ յերեսը պաչեց, ասաւ. Կեցէ իմ քվոր տղէն, ես դինամ որ իմ դուշմնին կը յաղթայ։ Ղանչեցին թէ, Մհեր, արի, մատաղ կեր։ Ասաւ. Շնորհակալ եմ, ձեզի անուշ հրնի։ Ասին. Հընչի համար, դու էլ անոթի ես, յարի կեր։ Ասաւ. Ինչպէս Աստուած բնձի կամեցեր ա, սիրտս լրցուեր ա, կուշտ եմ, էթամ Քուրկէջալադը քաշեմ դուս։ Գնայ քաշեց բերեց դուս, ասաւ. Քեռի Թորոս, դեամ չկայ դանեմ բերանը։ Ասաւ, թէ մէջքը թալուկ ձիու գեամ խան բերնէն, դարկ Քուրկէջալադու բերանը, այնարն էլ (թամբ) դար վրէն։ Բերեց դանեց վրէն։ Մէկ էլ ձէն տուին, թէ անոթի ես, յարի խաց կէր

էն էլ վեկալեց ասաւ, չեմ ուտի. էդ մարդիկը վէկալին թէ գոր ես էթում. էսի ասաւ թէ իմ Պապ թագաւորն ասում էր գնա աւ անելու, մկա ես ուզում եմ էթամ աւ անեմ. Հելաւ ձիներ խնծաւ, գնաց. Գնաց աւի տեղ ֆանաւոր ժողվեց՝ ասաւ էկաւ. Քեռի Թորոսը կայնաւ դէմը, ասաւ. Էդ ինչ ես բերում. Ասաւ. Աւ եմ բերում եմ. Ասաւ. Էդի աւ չէ, չոլի ֆանաւարա, էլլիկը կը վախենայ. Մհերը թողեց. էդ ֆանաւարները փախան գացին էլի յիրանց աեղուանքը. Էսգուց դէն գնաց աւ անելու: Օրերից մէկ էր մէկ պառաւ կնիկ էկաւ էտու յառէջը կտրեց, ասաւ. Մհեր ֆան, շատ շնորհակալ ենք քեզնից. Ասաւ. Ինչի համար շնորհակալ ես. Ասաւ. Էնդու համար շնորհակալ ենք, որ էս տասվերկու տարի մեզի պախում ես. Ասաւ. Էմաղ. Ասաւ. Քո մէրը թագաւորը տվեր էր կոտպաշտ թագաւորի տղին.

Վեկալաւ ասաւ, թէ բա էդ ինչամալ հէլաւ, որ իմ մէրը չէ դացէ էդ թագաւորի տղին առէ. Ասաւ. Էն վախտը որ քո մօրն ուզեցին, տասվերկու տարի ժամանակ դրին, մկայ տասվերկու տարին թմբմեր ա, չեմ դինում եմ քեզնից երկուզ են անում են, չեն գալուն են մէրդ տանին, թէ չեն գինում են, թէ տասվերկու տարին թմբմեր ա. Էն էլ գալըմ ա, պարգի նախէն բռնում ա, թէ պապի, իմ մէր վիրն ես տուէ մարգի. Էն էլ վեկալում ա ասում ա. Քեզ ինչ, վիրը տամ՝ տամ. Վերցնում, ասում ա. Զէ, ես պտի յիմանամ, տենամ վիրն ես տուեւ Էն էլ վեկալում ա ասըմ ա. էդ զանէն (պատմութիւն) քեզի վորն ասաւ. Էն էլ ասըմ ա՝ թէ Ֆլան պառաւն ա ասեր ա, թէ տվէ կոտպաշտի տղին, հը՞նչ ես դու տվէ կոտպաշտի տղին. Թագաւորը գանչում ա պառվին ասում. Պառաւ, քեզ ինչ իրաւունք կայ որ Մհերին էդ դանէն ասեր ես. Պառաւը էլ ասում ա, թէ թագաւոր, գլխիդ դուրբան հլնեմ, իմ տղերքին կոտպաշտ թագաւորը տարաւ սրպանեց՝ ես էտու համար սիրտս մրռմռում էր, ասեցի, էդու համար թագաւորը բռդուն ձեռ չտուեւ. Էդ պառաւը դարձաւ գնաց. Էտ թագաւորը ասաւ Մհերին. Մհեր ֆան, դու էդ պառուին մի յանկաֆ արա՝ էտի ֆոֆրգեր ա, ծուեր աւ Նոր Մհերը կասայ. Ելացն ու գինին, Տէր կենդանին, չեմ մնայ, կեթամ կռիւ. Ղանչայ թէ Թորոս, ես չեմ կանում եմ, դու քու քվոր տղին յաղթայ. Էն էլ կրգայ կասայ. Մհեր ֆան, ծուռ ծուռ մի հէլի: Էն էլ կասայ չրնի, կասայ, ես ընձի պտի սպանեմ, ես պրտի էթամ կոտպաշտի հետ կռիւ անեմ. Կը վեկալայ կասայ որ հէթում ես, գորդ տամ քեզի.—Ես իմ տղամարդութուն, գորդով չեմ էթայ, իմ թուրը թեռ ա, հատայիր ծոցս ա, ես մենակ պրտի էթամ: Գինի յիրան գեղի մէջն յիրան էլլիկի հետ հայալամիշ գինի. «Էթաշ իմ ձեռ, կասայ, պայրն

Աստծու ձեռը, յուս ունիմ Աստծուց, քեռի Թորոս, կարիճուն անեմ։ Էնտեղ քեռի Թորոսը կասայ. Մէ ձի ես խնձնեմ մէկ դու, էթամ ճամբախը նշանց տամ։ Հընկնում են ճամբախը էթում են։ Քեռի Թորոսի ձինը էտու ձիան խետ չի էթում ա, էտու համնը ասում ա. Քեռի Թորոս, ձինդ քշէ խասցրա ընձի. էն էլ ասում ա. Քո ձինը խրեղէն ա, իմնու նման չէ։ Էն էլ ասում ա. Ճամբախը նշանց տու յետ դարձի։ Էն էլ վէկալում ա ասում ա. Մհեր ջան, քեզի չնմ կանայ թողի մենակ։ Վեկալում ա ասում ա. Չէ, դու դարձի։ Քեռի Թորոսը էս խէտ նշանց ա տալում ա ճամբախը, յետ ա դառնում։ Մհերը դառնում ա քեռի Թորոսի ձեռը պաչում ա, ասում ա. Ընձի օրհնա։ Էն էլ ասում ա. Աստծու օրհնիթը վրէդ հընի։ Աստուած քո բանն աջողա, գնա։ Մհերը հընկնում ա ճամբախ էթում ա։ Անահում (անհուն) շատ գոշունի ոստան ա գալում։ Ղոշունը կտրում հնցնում ա։ Էն եան քամակը առնում ա։ Խարցնում ա, թէ դոր էք էթում էք։ Ասում են, թէ էթում ենք Կապուտկոդը Գապ թագաւորի վրայ կռիւ։ Մհերը խարցնում ա ի՞նչ մարդ էք, ասում են՝ մենք կոսպաշտ թագաւորի գոշունն ենք։ Մհերը խարցնում ա, թէ թագաւորն էլ էկէ՞ր ա։ Ասում ա՝ էկեր ա, յասէջ ա։ Մհերը դառնում ա հետ, գոշունի հետ մտնում ա կռիւ։ Դնում ա ձեռը համայիլի վրայ՝ ասում ա. Ամեն մեռնեմ, Մայրամ Աստուածածին, հնձի դուվաթ տու, որ կռիւ անեմ։ Մտնում ա գոշունի մէջը բիրդան ցարդում, որն յինքն ա ցարդում ա, որն էլ ձինն ա ոտի տակ տալում։ Որը փախնում ա, որը ցարդում։ Խասնում ա կոսպաշտի թագաւորի գլոխը կրարում ա, առնում բերում տալում ա Գապ թագաւորին, ասում ա. Հրամեցի կոսպաշտ թագաւորի գլոխը քեզի բերի փէշքէշ։ Ասում ա. Կէցէ իմ Մհերը։ Գալիս են համէն էտ շհարին մախլուխը թալում են Մհերի ձիան ոտը, ասում են մեր հոգին ազատեց կոսպաշտի ձեռնէն։ Գապ թագաւորը վէ կայնում ասում ա, թէ Մհեր ջան, փաշէն յիր խօրիդ գոյաղ ա, ընդու գլոխն էլ կտրա, իմ ջանը դինցանայ։ Էն էլ ասում ա. Ցուս ունիմ Աստծուց, տարին թմբմի էթամ ընդու գլոխը կըտրեմ առնեմ գամ։ Գապ թագաւորը ասում ա. Հը՞նչ ես տարին թմբմցնում ես։ Ասում ա. Ղոշուն դրբասայ, որ էթամ գոշունի խետ կռիւ անեմ։

Որ տարին թմբում ա, Մհերը հընում էթում ա Մսրը։ Էթում ա Մսրը, չադրը զանում ա հեռուն, մէջը նստում ա։ Յիր ձինը կապում ա չադրի դրաղը, արխային պառկում ա քնում ա։ Մէկը էթում ա խաբար ա տանում ա փաշին, փաշէն սաղ բյնի, մէ չադրը զարկուկ ա քո դուռուխի (հոդի) մէջ։ Էտի յիմանում ա, Մհերն ա, տասը ձիաւոր խէթրցնում ճամբում ա, գացէք տեսէք

ինչ ջուրա մարդ ա։ Գալում են, տենում են որ չատրի մէջը պառկէ քներ ա, կէսը դուսն ա, կէսը ներսն ա ու էտու շնչից չատրը բանձրանում իջնում ա։ Գալում են էտուն խարար են ասում են։ Հը՛, ինչ մարդ ա, հարցնում ա բոռնցը։ Էտոնք էլ ասում են. Ձենք գիտում, շատ բէդ մարդ ա, կէսը չադրի մէջն ա, կէս դուսն ա, ու էտու շնչից չատրը բարձրանում ա, իջնում ա։ Էտի ասում ա թէ տղէրը, յէլէք իշտա գոշուն կայ գացէք չորս բոլորը բռնէք։ Գալում են գոշունը չորս բոլորը հասարի պէս բռնում են։ Մհերը վէր ա հլնում ա, դանչում թէ Էյ քէ մեռնեմ Մարութենի Մայրամ Աստուածածին, քէ օմակ տուր։

Ձինը խեծնում ա, գոշունը բիրդան ցարդում ա։ Տանում ա խասցնում ա Մսրայ մէջ։ Որ բսպանում ա պրծնում ա, էթում ա փաշի գլոխը կտրում ա։ Կտրում պրծնում ա, ուզում ա գլոխը վերցնի բերայ տայ Գապ թագաւորին, յաչքը հրնկնում ա փաշի կնկան, տենում ա շատ խորուտ ա։ Փաշի կնիկը բատուն աչամիշ ա անում ա, թէ ես քեզի առնեմ, մայի կատե, թագաւորութունը քեզի հլնի։ Մհերը ճնում ա. տասնը խինգ օր ճնում ա։ Էտի ասում ա. Իմ մարդութունը ինչ ա որ ես էատի ճնամ։ Իրապաշտի կնիկ առնեմ, էթամ էլի քեռի Թորոսի կուշտը։ Ինդե կնիկը ասում ա. Հնչի թողես էթաս, թագաւորութունը փիս ա որ չես ուզում ես մնաս։ Էն էլ ասում ա. Չէ ես ուզում եմ էթամ։ Ինդե։ Վեկալում ա ասում ա. Մի գնա, Ինդե Գապ թո թագաւորութուն անա, դու էլ էատե արա։ Էն էլ ասում ա. Չէ, ես պտի էթամ։ Մհերը վեր ա կենում ա, էթում ա։ Դառնում էթում ա Կապուտկոդը։ Հրամեցի, ասում ա, Գապ թագաւոր, էսի քո գուշմի գլոխը կտրեցի բերի։

Շնորհակալ եմ, ասում ա։ Էս խեռ Մհերը յիր ձինը խեծնում էթում ա աւ անելու։ Մնում ա մէկ տարի ժամանակ. տարին պտըտում ա՝ Մսրայ փաշի կնկնից մէ տղայ ա հլնում ա։ Մնում ա տղէն ցոցինում ա, անբմը դնում են Մսրամէլիք։ Տղէն էթում ա յիրան հնկերտանքի խեռ խաղում ա։ Էդ վոր մէկին խասնում ա՝ դանում ա ուր, թեր ջարդում ա, բսպանում ա։ Գալում են գանգտուոր յիր մօրը։ Ախալ քո տղէն մեր տղին ապաներ ա, տենանք ինչի խամար ա բսպանում ա։ Մէրը Մսրամէլիքին դանչում ա, ասում ա. Հը՞չիս քո դրկեցին գանում ես, որ կոտրում ես։ Էն էլ ասում ա, թէ Էտոնք ասում են բնձի քէաֆրի աղայ ես, քո մէրը սիրող ա արեր։ Էտի որ ասում ա սիրող ա արեր ա, մէրը ասում ա. Որդի ջան, Կապուտկոդի Մհերը էկաւ գոշունը ջարդեց, խորդ գլոխը կտրեց, էկաւ բնձի սիրեց։ Մսրամէլիք էլ ասաւ. Ջանիս յուզտ հլնի, որ քանի ջանս սախ հլնի, Հայաստուանը բրդեմ, հայիցս առնեմ։

Գանք Մհերը։

Բերեցին Վանայ մէկ աղջիկ ուղեցին Մհերին։ Մհերը պատկուաւ, մէ տարի ժամանակ քաշեց, կնիկը պատկաւ Էրկու աղայ բերեց, ցեվիկ, (նկուորեակ), բերեցին կնքեցին, մէկի անունը Արամէլիք, մէկի անունը Սանասար դրին։ Հէյաւ որ Լուսնք կնքուան, Գապ Թագաւորը մեռաւ։ Զէնը գնաց Մարամէլիքին։ Ասին. Մարամէլիք, Գապ Թագաւորը մեռեր ա, ինչ կանաս էն էրա։ Էն էլ վէ կալեց թէ Մհերը սաղ ա, չեմ կանայ Մհերի վրայ քշի։ Մնայ որ յիրեք տարին թմմաւ, Մհերն էլ մեռաւ։ Զէնը գնաց հնգաւ Մարամէլիքի յանկաջը։ Էկաւ Մարամէլիքը Կապուտկոդայ էլը քաշեց տարաւ, տարաւ Քուռկէջալաթը, տարաւ խաղինէն, տարաւ Մհերի կնիկը։ Ծնաց էրկու յեթուամը, քեռի Թորոսը։ Քեռի Թորոս, ինչ անենք, մենք աղքատներ ենք, ասին Արամէլիք ու Սանասարը։ Վէ կալեց ասաւ. Ինչ անենք, թալնին տարան։ Ասին. Մեզ իրաւունք տու էթանք մէ տեղի վրայ աշխատանք անենք։ Էն էլ ասաւ. Որդի ջան, վոր գացիք, խորոտատես տղէրք էք, վիր կուշտն հրնկաք՝ չէք դառնայ յետ, ընձի կը մոռնաք, չէք գայ։ Արամէլիքը վէ կալում ա ասում ա. Եփոր մոռնանք, էրկու յաչքով քոռնանք, չենք մոռնայ քեռ Սորա [1]) քեռի Թորոսի ձեռքը պաչում են, խայտամիշ են հրնում են, հնկնում են ճամբախ էթում են։ Գեղէ գեղ, շահարէ շահար էթում են։ էթում են, մէ բարակ ճամբախ հնկնում ա յառեջները։ Մէկ ջոջ ձորի մէջ էթում են։ էթում են, տեսնում են, որ մէ դուրան տեղ չայիր չիմանա ա, չորս բոլորը դար ա, էս մեր գեղի պէս (Ղըշլաղ), էդ մէ ճամբախն ա, որ գացած են։ Տեսնում են մէ յազբուր կայ, մէ ջոջ չայ կըտրում հնցնում ա, էնդեն Արամէլիքը Սանասարին ասում ա. Էստի մէ շէնլիկ շինենք։ Էն էլ ասըմ ա թէ ինչի՞ համար շինենք։ Վէ կալում ա ասում ա, թէ մենք էլ չենք էթայ Կապուտկոդ, որ էն կռապաշտը մեղի ջարդայ։

—Բա քեռի Թորոսին ինչ անենք։

—Շինենք, շելիկը էթանք առնենք գանք։

Վէ կալում ա Արամէլիքը ասըմ ա. Ես պատաշար եմ, տունը կը շինեմ։ Սանասարն էլ ասում ա. «Ես աւ անող եմ, աւ կանեմ կը բերեմ, ընդով կապրենք»։

Զունք կէսօրին աւ կանեն, կէսօրէն յետ կրգեն յիրանց շէնլիկ շինեն։ Էն ինչ որ Սանասարը աւ էր անում էր, Արամէլիքը քար էր ասում էր։ Կէսօրնէ յետ յիրանց պատաշար շարում են։ Զումքի խինդ ամիս, էրկու հարիր շէնլիկ շինին էրկու աղ-

[1]) «Ցեռոյիս» փոխարէն յաճախ ասում են՝ սորա։

բրով։ Աբամէլիքը կայնաւ ասաւ, թէ Սանասար, մենք շորէն հէ-
յանք, էթանք մէ հանի վրայ շոր բերենք։ Վէ կալեց ասաւ. Ուզում
եմ մէ բերաւ շինեմ, նոր էթամ։ Բերին շինին բերաւ։ Մնաց
գլխի դուրէն, ծածկը որ քաշեն, չեն կանում քաշեն էրկու ախպրով։
Վէ կալում ա Սանասարը Աբամէլքին ասում ա, թէ Աբամէլիք, մենք
չէնք կանայ, էթանք պարտենք մարդ բերենք քէոմակ, էտի քաշենք։
Հէլան հնկան ճամբախ, գացին, Բաղտրդու դուռ հելան։ Մութը
տուեց՝ գացին մէ գուռ տփին, մէ պառաւ դուռ էկաւ։ Նանէ ջան,
մեզի տեղ տու նստենք, յէսոր գիշեր սրթրրվինք, յառաւօտ յրլ-
նենք էթանք մեր բանին։ Նանէն խարդրեց թէ հռւստ էք։ Դէ ա-
սաւ բէրնայ (անհայրենիք) էնք, տէր չունենք, հէր չունենք, մէր
չունենք։ Ասաւ թէ յարէք ձեզի անեմ ընձի տղայ, մացէք իմ
տունը։ Ընդոնք էլ ասին, թէ մէ քանի օր մնանք, տեսնանք մեր
խոսքը յիրար խեռ կըգայ։ Հելան մէ վեց օր, օխտ օր մացին։ Ա-
բամէլիքը Սանասարին ասաւ. «Լաւ բան ա, մենք որ մացինք էս
տեղը մէ վախտ կը մնանք, թէ որ յաւ հէլաւ կէթանք մեր
քեռի Թորոսին կը բերենք էսաեւ։ Մէ քանի ժամանակ մնացին.
էտեւ Բաղդրդու խալիֆի դալֆաչին մեռաւ։ Բաղդրդու խալիֆէն
յիրան վազիրին յղրկեց թէ գնա շահարի մէջ ընձի մէ յաւ տղայ
գտի, աւ յարի։ Ման էկաւ, էկաւ պառաւի դուռը։ Աբամէլիք ու
Սանասարը նստուկ ին պառուի դուռը։ Ասաւ. Նանէ, ասաւ, էգ
տղէքից մէկը տու խալիֆին դուլլուղ անա։

—Ի՞նչ ա ընդու դուլլուղը։

—Ղայֆա էփա ու չրուխ տարքա։

Պառաւն ասաւ. Ինձ ամիս փորս եմ պախե, տասվերկու
տարի էլ ջրից, կրակից ու ճրագից ազատ եմ արէ, չեմ տայ։

Հէլաւ էգ վազիրը գնաց թագաւորին ասաւ։ Թագաւորին որ
ասաւ, թագաւորն էլ ասաւ իմալ տղայ ա։ Ասաւ շատ խորատիկ,
ցահիլ տղայ ա, կանամ ասեմ չրճարուի էստեւ։ Վէ կալեց ասաւ.
Գնա ամիսը տու քառասուն քիսա, թաքիլան տա յարի։ Էկաւ ա-
սաւ. Պառաւ, ասաւ, ամիսը քառասուն քիսա կրտամ քո տղին,
թո գայ։ Էն էլ խարդրեց. «Աբամէլիք, Սանասար, որ մէկդ կե-
թաք։ Ասին որ մեզի դրրկում ես, ջրխտով էլ կեթանք։ Գացին
խալիֆի աթակը (մօտ)։ Վէ կալեց խալիֆը ասաւ. Ձեր անունը
ընձի ասէք։ Վերցրեց ջոջը ասաւ. Իմ անունը Աբամէլիք ա, էսդու-
րըն էլ Սանասար։ Էս տղերքը խալիֆին շատ դուր էկան։ Մէ
յիրեք տարի ծառայութուն արին։ Յիրեք տարին որ թմրմաւ, Սա-
նասար ասաւ Աբամէլիքին. Բօյ ա մացինք էս տեղը, մեր քեռի
Թորոսը անմահական ա, էթանք ընդուն պախենք։ Աբամէլիք ա-
սաւ. Էթանք խալիֆի սոլերը չիտկենք, տեսնանք ինչ ջուզաբ կը-

ասայ մեզի։ Գացին խալիֆի սոլերը շիտակին։ Խալիֆէն ասաւ. Որդի ջան ընչի՞ իմ սոլերը շիտակիք։ Արամէլիք վէ կալեց ասաւ, թէ մեզ հէր, մէր չունինք, մէ քեռի ունինք, անունը Թորոս ա, անմահական ա *) յինքը, մահ չունի, ուզում ենք էթանք պախենք։ Խալիֆէն ասաւ. Ջունք հիմի ընչի՞ չիր ասում, թէ քեռի ունէք։ Վեկալեց ասաւ. Դու չիր խարցնում, մենք էլ չինք ասում։ Ասաւ. Ձեզի չեմ յրդրկի էթաք, դուք գացիք չէք գար։ Մարդ ճամբեմ, քեռի Թորոսին բերել կը տամ, ձեր բնակարան դոր ա։ Թէ մեր բնակարան Կապուտկոդն ա։ Մարդ դանչեց, թուղթ կրեց Կապուտկոդայ վրայ յղբրկեց, գնաց քեռի Թորոսի կուշտը։ Տարաւ թուղթը տուեց քեռի Թորոսին. Շատ բարև քեզի, ասաւ, քեռի Թորոս. Արամէլիքն ու Սանասարն են գրած։ Լաւ տեղն ենք հնկէ, Բաղդրդու խալիֆու ձեռն ենք հնկէ, խնդրում ենք որ դու մեզի սիրես գաս էս տե Բաղդադ։ Եռսուն տուն Կապուտկոդայ մէջն ա մացէ. քեռի Թորոսը էդ մախլուխին դանչեց, խեռներ խալալամիշ էգաւ, թէ ես էթում եմ, մացէք բարով։ Էղանք ասին, թէ քեռի Թորոս, դու որ գացիր, մեր հալը իմալ դրնի։

Որ կացի էնտե յաւ հէլաւ ձեզի կը տանեմ։

Վէ կացաւ էդ մարդը գնաց Բաղդադ։ Գնաց խալիֆին ձեռ տուեց։ Խալիֆէն ընդունեց տեղ տուեց՝ նստաւ։ Մէկ ժամանակ ճնաց, շատ սիրեց քեռի Թորոսին։ Քեռի Թորոսը տեսաւ յիրանց ապրուստը չընում ա։ Արամէլիք ասում ա. Հնչի՞ չընում ա։ Քեռի Թորոս ասում ա. Մեր դիշմանը մացեր ա Մրսրը, մենք էկեր ենք էստե նստէր ենք։ Բա չիգանք ինչ անենք, քեռի Թորոս։

Քեռի Թորոս ասում ա, էկեր ենք, ձեզնից մէկը պտի կարգուի։

Արամէլիք ասում ա. Հրյա մենք թագա ենք էկէ բատե։

Վէ կալրմ ասրմ ա. Դանք չգանք, պտի մեզի դուլլուդդար խարս հնի։ Արամէլիք էլ, ասրմ ա. Դու դիդաս, իմալ ուզում ես, արա։ Քեռի Թորոսը Սանասարին ճամբում ա խալիֆի կուշտը, ասում ա. Գրտի մեզ խաց հնի, մենք ուտենք։

Խալիֆէն ասրմ ա. Խացը բոլ ա, էտ ինչպէստ բան ա, որ ասրմ ա մեզի խաց հնի, մենք ուտենք։ Դէհ Սանասար ջան, դու գնա, կը դրկեմ յիրան կը դանչեմ։

Ղանչեց քեռի Թորոսին, խարցրեց, թէ քեռի Թորոս, հընչ իր էտ բանն ասում, խացդ հմրնից բոլ ա։

---

*) Քեռի Թորոսը շատ երկրներ էր պրտրտէ, պատահեր էր անմահական ջրի, խմեր էր ու իմացեր էր, որ ինքը ծաղկի պէս թագաւոր ա։

Խալիֆայ, գրլիլիդ դուրբան հլնիմ, ախր դու լաւ պէտք ա որ խասկանաս։

Էն էլ վեկալեց, ինչով խասկընամ։

Վեկալեց ասաւ, թէ մեզի մէ խարս պրտի հլնի, որ մեզի կառաւորայ։

Էն էլ վեկալեց ասաւ. Քո տղերքի վոր մէկն ա ջոջ։

Ասում ա. Աբամէլիքը Սանասարայ ջոջն ա։

Բերեց յիրա աղջկայ անունը Նազլու-խանում էր, տուեց Աբամէլիքին։ Գնակեց տարաւ քեռի Թորոսի տունը։ Մէ տարի ճնաց, պառկաւ մէ էրեխայ բերեց, էկան գիվանխանի մէջ խալիֆին ու քեռի Թորոսին յաչքայուսէք տուին. Ցաչքդ լուս հլնի, քեռի Թորոս։

Ի՞նչի համար էք ընձի յաչքայուսէք տալում։

—Խարսդ պառկեր ա մէ տղայ ա բերեր ա։

Քեռի Թորոսն ասում ա. Դէ խարսը տարէք դէն, ես դամ իմ էլեխէն տենամ։ Էկաւ տեսաւ, սրրտին չեկաւ. թողեց գնաց։ Բերին կնքին, ասին. Քեռի-Թորոս, անունը ինչ դնենք։

Ասաւ. Վժիկ Մխոյ։ Ասին. Հընչի՞ բտենց այչախ (վատ) անուն դրիր։ Ասաւ. Ես էկայ տղէն տեսայ, դուրը չեկաւ։ Խալիֆէն ասաւ. Հնչի՞ դուրդ չեկաւ, տղայ ա էլի։ Ասաւ, թէ մեր ազգէն խնկէն մէկ զոչաղ գըլնի, էտի այչաղ տղայ ա։

Մէ տարի էլ ա ճնում, էլի պառկում ա մէ տղայ էլ ա բերում։ Զյերկընցրնենք էմալապէստ քեռի Թորոսը իմայ էնի տեսաւ, էդ էլ էկաւ տեսաւ։ Տարան կընունք, ասին. «Քեռի Թորոս, անունը ինչ դնենք»։ Ասաւ. «Վեթիս»։ Էլի մէ տարի ճնաց, մէ տղայ էլ հէլաւ, անունը ինչ դնենք։

—Զէնով Օհան։ Էդու յէտն մէ տարի էլ ճնաց մէ տղայ էլ հէլաւ։ Քեռի Թորոսը անունը դրեց Բռնած Կուռիկ։ Էդուց յետի քեռի Թորոսը էկաւ նստաւ յիր տունը, միտք արաւ, միտք արաւ, վեկալին Աբամէլիքն ու Սանասարը ասին թէ հնչես էտտա միտք անում։

Քեռի Թորոսը ասաւ. Միտք էմ անում թէ աշխարհքի էգն ա շատ թէ որձը։

Աբամէլիքը վեկալեց տասաւ, թէ հը՞նչ բան ունես էդ բանի հետ։

Վեկալեց ասաւ, թէ ձեր մրտքին վոր մէկն ա շատ։

Վեկալում ասում են էրկու աղրրով, թէ կարելի ա որձը շատ հլնի էգի վրայ։

Վեկալում ասում ա, թէ մենք էգ ենք, վորձ չենք։

Աբամէլիքը ասում ա. Հը՞նչ ենք էգ։

Ասում ա, թէ յիրենք թող ունենք, յիրեն էլ մենք էնք, արա՛ վեցը, մենք հելերենք կնկայ կնիկ։

Արամելիքն ասում ա. Հը՞նչ-ենք հելէ կրնկայ կնիկ։

Ընդու համար ենք հէլէ՝ որ մեր դուշման թողեր ենք կապուտկոդը, մենք էկէ խալիֆին դուլուդ ենք անում։ Էս ջուրը զօրեղ չի, ձեր էրեխէն դօշաղ չինի դուս։ Գացէք թագաւորին խնդրուեցէք մեզի իդին տայ, մենք էթանք, հինչ որ մացինք բոլ ա, շնորհակալ ենք։

Արամելիքը ու Սանասարը գացին խալիֆի դէմը կայնան։ Խալիֆն ասաւ. Հնչէք կայնէ իմ դէմը։

Ասին. «Խնդրում ենք իդին տաս շահարից դուս գանք, էթանք մեր տեղը, բոլ ա ինչ որ գուլլուդ արինք»։

Խալիֆէն ասում ա. Հինչ էք նեղանում ընձնից, քեռի Թորոսին գանչեմ գայ, տենամ հինչ կասայ։

Ղանչեց բերին, «Քեռի Թորոս, ասաւ, նեղացեր ես ընձնից»։

Վեկայեց ասաւ թէ շատ շնորհակալ եմ քեզնից էլ, քո շէնլրկից էլ, խընդրում ենք որ մեզի ճամբու դնես էթանք մեր երկիրը։ Հէլաւ խալիֆէն էրկու խարիր առուն դրեց խետը, գացին։ Գացին ճամբի մէջ տեղը, էն տեղը Արամելիքն ու Սանասարը կայնան մախլուխի յառէջ. քեռի Թորոսն ասաւ հնչի՞ կայնաք։

Ասաւ թէ էս ձորի մէջը շէլլիկ ենք շինէ, էթանք ընդե։

Քեռի Թորոսն ասաւ. Բա հնչի՞ ընձի չէք ասում։

Ասում են. էրկու հարուր տուն շինել ենք։

Վեկայում ասում ա. Էսդու ճամբախը դորն ա։

Ասում ա. Էսենց տարի դոլթուդէն պտրաենք, էթանք էնդե ա։

Էդ մարդիկը հէլան գացին։ Գացին աեսան, որ մէ պստի յառու կտրում ա մէ ջոջ շայ յրնցնում ա, ընդու կուշտն էլ տներ են։ Մտան մէջը տեղաւորան։ Բերեցին յիրանց խամար ժամ շինին, քարէ տուն շինին, գացին յիրանց բերտն էլ շինին, քար քաշին վրէն։ Էկան, քեռի Թորոսը ասաւ. «Էկէք մեր գեղին անուն դնենք»։

Ասին. «Քեռի Թորոս, դու գինաս, ինչ անուն ուզում ես, դի՛»։

Էն էլ ճամբեց խալիֆի կուշտը, գանչեց բերեց։ Ասաւ. «Խալիֆա, մեր գեղին անուն դի՛»։

Խալիֆէն ասաւ, թէ անբախտութուն հընչ էք արե ընձի կանչէ, ըստու անունը դրուկ ա։

Քեռի Թորոսը ասաւ. Հայն ու գինին, Տէր կենդանին, չենք դրէ։

Ասաւ. Դրեր էք սուն վրը սան, թող անունը մնայ Սասուն։

Ընթանք էտէդ մէ տարի մացին։ Աբրամէլիքի կնիկը պառկաւ մէ տղայ բերեց, քեռի Թորոսը անունը դրեց Ճռռ Կուռիկ։ Մէ տարի էլ հնցաւ—մէ տղայ էլ բերեց, անունը դրեց Թար Ճրնճղուկ։ Քեռի Թորոսը շատ տխրաւ, վեկալեցին Աբրամէլիքը ու Սանասարը թէ հնչի՞ տխրար։

Ասաւ. Ուզում եմ Մհերի պէս տղայ հրնի, էթայ դուշմնի դլոխ կտրայ, որ իմ ցան դինցրնայ։

—Աստուած մեծ ա, մէ երկուդ արա, ասին։

Մնաց էրկու տարի, էրեխայ չբերեց խարսը։ Էս հետ պառկաւ մէ էրեխայ բերեց։ Դացին քեռի Թորոսին դանչին, ասին. Խարսը պառկէ մէ էրեխայ ա բերէ։ Էդ մարդը հելաւ գնաց տղէն տեսաւ, շիտակեց փորի վրէն, տեսաւ մէկ խաչ թիկունքն ա, թևերը վեկալեց խաղցաւ։ Ասին. «Հնչեմ խաղում»։

Ասաւ. «Սասունայ ճրագ կպաւ, Ասուն փառք հրնի»։

Հէլաւ որ տարան կնունք, ինչ դնենք, քեռի Թորոս, անունը։

—Ասաւ. Դաւիթ։

Ինչպէստ Մհերը ջոջցաւ ամիսը մէ տարուան բարա, Դաւիթն էլ ջոջըցաւ ամիսը մէ տարուան բարա։ Բերեց Դաւթին պախեց քեռի Թորոսը. վեց տարի պախեց, ջոջըցրեց։ Պոդպտէ չաքմա (տրեխ) արաւ խաղցրեց՝ ճխտեց ջարդեց։ Էտի որ հէլաւ վեց տարեկան՝ Աբրամէլիքն ու Սանասարը հնկան մեռան։ Ջէնը գնաց Մըսրը, թէ Աբրամէլիքն ու Սանասար մեռեր են։ Մրսրամէլիք կը խարցնայ ընդոնց նստած տեղը որ մէկն ա։ Թէ թագա Սասուն են շինած՝ Սասուն ա։ Մսրամէլիք ասաւ յիրան զուլրուխտար Ղոզրէկին. Ցելի իմ յիրեք ոտնանի ձիներ խնծի, գնա Սասուն, թէ եթրմներր, թէ էլը, թէ խաղնէն քանդա բէ։

Ասաւ. Հնձի գորը տու, էթամ։

Հելաւ հինդ հարիր ձիաւոր տուեց։ Ղոզրէկն էկաւ, էլը ժողվեց տարաւ, խաղինէն տարաւ, էտ օխար եթու�ը տարաւ։ Մացին քեռի Թորոսը, խարսը, ու եոսուն քեռասիր տուն։

Խարսը վեկալեց ասաւ, թէ քեռի Թորոս, ընձի վեկալ տար Բաղդադ իմ խէրը պախայ։

Ասաւ. Ա՜յ հայ, էտ ինչ ես ասում։

Խարսը վէկալեց ասաւ. Հընչի՞։

Ասաւ. Ըսկի մէկի ցաւը չեմ, Դաւթի ցաւն եմ, պահ էթամ Դաւիթ բերեմ։ Հէլաւ գնաց Բաղդադ, խալիֆի կուշտ. ասաւ. Խալիֆ, իմ էլը, եթրմներ տարաւ Մսրամէլիք։

Ասաւ. Կրակը թափի ձեր ամէն գլխին, ըմէն ձեր ագգի շոուքն ա իսանում։

Ասաւ. Հընչի՞։

Ասաւ՝ թէ Մհերը էնտեղ սիրող արաւ, Մսրամէլիքը էնտուց հէլաւ, էկաւ ձեր ագդի քոր կտրեց։

Քեռի Թորոսն ասաւ. Մէ ճամբան տու ես էթամ։

Խալիֆը բերեց մէ թուղթ գրեց, ասաւ. «Գլխիդ դուրբան հընիմ, Մսրամելիք, էյն էլ քե դուրբան հընի, խաղինէն էլ քե դուրբան հընի, եթիմները տու թող առնի գայ։ Ձես իսայ վախտիտ հազըր մաց, ես էլ գալըմ եմ քո վրէն կոխ, էդ օխտը եթումը իմ թոռներն են։

Քեռի Թորոսը էդ գիրը կառնի կեթայ Մսըր, կըտանայ կըտայ Մսրամէլիքայ մօրը։ Մսրամէլիքայ մէրը կը կանչայ Մըսրամէլիքին, կասայ. Մսրամէլիք, դուրբան քե, եթումները տու թո քեռի Թորոսը տանայ։

Կասայ. Հնչի՞ սամ, չեմ տայ։

Մէրը կասայ. Հնչի չես տայ։

Կասայ. Էնդայ չեմ տայ, որ Դաւիթը նստաւ կուշտս մուրուքս բռնեց ծծխեց, յդոգս յիրար էկաւ։ Ուզում ի տի մահացնի, չթողին, ասին ափսոս ա էդ տղէն։ Էդու համար չեմ թողում, որ վախենում եմ ընձի վնասայ։

Մէրն ասաւ. Թող էթայ, բան չկայ, երեխայ ա։ Մօրն յականչ արաւ՝ ասաւ թուրը քաշեմ, բարձրըցնեմ, թո տկանց յընցնեն, իղին տամ էթան։ Ձէնով Օհանը հնցաւ, Թաւ Ճնճղուկն հնցաւ, Վժիկ Մխոն հնցաւ, Բռնած Կուռիկն հնցաւ, Ճոռ Կուռիկն հնցաւ, Ցռան Վեթոն հնցաւ, Ցնաց Դաւիթը։

Դաւիթն ասաւ. Ես չեմ հնցնի։ Բոռաց, ճվաց՝ փախաւ։ Ցասան բռնին տաս ֆանով։ Թափ տուեց էդոնց, քցեց հնցաւ։ Քեռի Թորոս, ասաւ Մսրամէլիք, հնչի՞ չհնցաւ։ Քեռի Թորոսն ասաւ վախենում ա։ Առաւ քեռի Թորոսը եթումներին, էկաւ Սասուն։

Մսրամէլիք դարձաւ գնաց մօրն ասաւ։ Հինչ Դաւիթը տեսայ, ոդն ընձի կը սպանայ։

Մէրն էլ ասաւ. Օղու, էրեխայ ա, վախեցաւ, էն ինչ ա որ քե սպանայ։

Գանք քեռի Թորոսն։

Քեռի Թորոսը էրեխէքը առաւ էկաւ Սասուն։ Էկաւ տեսաւ որ ապրուստը չի հընում ա, դանչեց էդ եռսուն տանը, ասաւ. «Տուէք էդ եռսուն հորթերը ես պախեմ, օրական մէ հաց կը տանեմ, ճժերս կը պախեմ։ Տուին, տարաւ պախեց։ Դաւիթն էլ խեսը հընում էր էթում էր։ Ցիրկուն Դաւիթն բերում էր լոդկըրնում էր, դընում էր ծոցը, շատ մուղաթ էր Դաւթին։ Դաւթին ասում էր, նեղանում ես (վաստակիլ), մի գայ։

—Չէ, քեռի Թորոս, ասում էր Դաւիթը, ես էլ կը գամ։ Մնաց մէկ ամիս խնդրեր էթում էր գալում էր։

Օրերից մէկ օր քեռի Թորոսը յետ հնկաւ, Դաւիթը հորթերը պահեց։ Կէսօրուան մօտիկ տեսաւ մէկ հորթարած էլ էկաւ. գնաց վազէ վազ էդ հորթարածի կուշտը. խարսրեց թէ ինչ հորթարած ես։

Ասաւ. «Գլից եմ»։

Ասաւ. «Անունդ ինչ ա»։

Ասաւ. «Անունս Կիրակոս ա»։

Ասում ա. «Դու յուստ ես»։

Դաւիթն ա ասում ա. «Ես Սասունայ եմ»։

«Բա, ասում ա, քո անունն հը՞նչ ա»։

Ասում ա. «Իմ անունը Դաւիթ ա»։ Վեկալում ա Դաւիթը էտուն ասում ա. «Կիրակոս. իմ հորթերը պահա»։

Ասում ա. «Հնչի պահեմ»։

Ասում ա. «Քեռի Թորոսը գացեր ա չէ էկէ»։

Էտ էլ ասում ա. «Զէկէ չէկէ, ինչ անեմ»։

Ասում ա. «Քունը լըցուէ յաչքերս»։

Ասում ա. «Որ քունը լցուէ յաչքերդ, ես ինչ կանամ անի, ես դարիր, դու դարիր»։

Ասում ա. «Հացն ու գինին, Տէր կենդանին, մէկ կոպալ կը դարկեմ կիլնես յանդունդքը»։

—Տէ, ասում ա, որ էնենց ա, կը պահեմ, մեղայ Աստծու։

Կոպալը կը տնկայ, կուլարը (թաղիկ) կը քաշայ վրէն որ պառկի քնի։ Ժամանակը կը դայ, Կիրակոսը կը գայ Դաւթին կը խանայ վեր, թէ հելի հորթերդ առ՝ գնա, մութն ա։ Հորթերը կը տայ յառեջը, կէթայ, պոչն ու ոտը կը ընայ, կը տփայ էն մէկէլ հորթակայ վրէն։ Քեռի Թորոսը ճամբու վրայ պառկած կլնի կաղայ. «Դաւիթ ջան, էդ հը՞նչես անում, խրլդի հորթերը վերցնում ես տփում մէկէլ հորթի վրէն, խաղեցնում»։

Ասում ա. «Քէֆս էկեր ա»։

—Հնչա քէֆդ էկէ։

Ասում ա. «Մէ ադրէր Գլից էկեր ա իմ կուշտս»։

—Անունն ինչ ա։

«Կիրակոս ա»։

Ասում ա. «Կոպայս տնկում եմ, կուլապս քաշում եմ վրէն, պառկում եմ տակը քընում եմ, ես վատէն չեմ գինում եմ, իմ ախպէր Կիրակոսը պահում ա հորթերը, գալիս խանում ա ընձի վեր, էլ, քեռի Թորոս, դու մի գայ, ես կը պահեմ հորթերը»։ Էս խեղ ուրխնում ա քեռի Թորոսը։ Մէ վախտ Դաւիթը հորթերը տանում պահում ա։

Մէկ որ Կիրակոսը յետ հնկաւ, շատ յանգնցաւ։ Դաւիթն հերառաւ, թէ քունս զատում ա ընձի։ Էկաւ, որ Կիրակոսը գլուխ բաց գալիս ա, «Ախպէր, ասաւ, հրնչ ես գլուխ բաց էկէ»։

Կիրակոսն ասում ա. «Ձէսոր մեր գեղ սատանան ժամ էր, խարիսայ են դրած, իշտա յեսրցայ չտուին»։

Դաւիթ ասաւ. «Դու հորթերին մուդաթ կաց, ես էթամ խարիսէն բերեմ»։

Էտ մարդ հնկաւ ճամբաս գնաց։ Գնաց Քլլից հէրաւ գուս. գնաց, որ ժամից հեյած են, որ դան նստին խարիսայ ուտեն։ Պառվրներ առած են եղր. խարիսէն ու խացը կանգնած են, որ լրցնեն՝ ուտեն։ Դաւիթն էկաւ պառուին գոչուց, ադն ու եղր լցրեց խարիսի մէջ, կոպալը քցեց խառնեց, հանեց դարկեց կանթի մէջ, դըրեց թեին, խացն էլ դարկեց գոլթուզը, գնաց։ Պառուը յացաւ, դժգրժաց։ Էնտեղի մարդիկը ասին. «Թո տանայ, պէտքը չէ»։ Տարաւ խառցրեց Կիրակոսին։ Տեսաւ, Կիրակոս գլուխը տփում էր, լալում էր։ Ետարցրեց՝ ասաւ. «Հնչի՞ ես լալիս, Կիրակոս։ Ասաւ էս ա, խարիսէն բերեր եմ, հացը բերեր եմ, եղն ու ադն էլ մէջը»։

Ասաւ. «Իմ հորթերը տարած են»։

—Ո՞ր տարաւ։

«Քառասուն դեռ էկաւ, քսանսուն հորթիկ գրկեց տարաւ։

Ասաւ. «Դոր տարան»։

Ասաւ. «Էնենց տարան, ճամբաքն էս ա»։

—Դէհ, ասաւ, կէ չուր ես դամ։

Դաւիթն հէլաւ գնաց։ Տեսաւ մէ հէրի միջէն մուխ յերնում ա, գնաց տեսաւ որ ութ կանթանի դոգան դրած են էն օջախի վրէն, հորթերը մորթած են լցած են մէջը, քաշեց տարաւ գէն գաղանը, գլուխը, ոտները, կաշինը լցեց էդ դագնի մէջ։ Մէկը մէջը կայներ էդ դեռերի, կերակուր էր էփում, փոխաւ դուս։ Դաւիթն էլ առաւ դագանը հէլաւ գուս։ Ջուրը ճիրեց, տարաւ խեյի գոտրցրեց (հեռացրեց), ասաւ. «Էտ էս մէ մարդը չի ուտում էս կայան (մնած) հորթերը, որ փոխաւ, էթամ տենամ մէնակ էս ա, թէ չէ ուրիշ էլ կայ»։ Էդ մէ գեր գնաց իր հրնկերանքի կուշար, գնաց ասաւ. «Ձեր տունը շինուի, մենք քառասուն հոգով դարտակ գաղանն ենք դնում օջախի վրէն, մէ ջահիլ տղայ էկաւ, հորթերը մէջն էր, ջուրը մէջն էր, գլուխը թալեց, ոտները թալեց, կաշին թալեց գաղանի մէջ, ասաւ. հէլաւ գուս»։ Դեռերը հէրից գուս վազան, Դաւիթը էկաւ կոպալն ասաւ կայնաւ։ Լոռնց գլխին, մէյ մէկ գանեց սրպանեց։ Եռսուն ինն էլ սրպանեց, մնաց մէկը։ Էն մէկն էլ մտաւ ներսը գանեց սրպանեց։ Մտաւ հէրի մէջը, մտաւ տեսաւ իսգինէն բոլ էր, յանկաջ բսկի չարաւ, էկաւ գանեց յիրեք գուս ջար-

դեց իրար վրայ, յիշիցս տեսաւ որ մէկ քուռակ ներքը կտպուկ ա. կոպալ թալեց ու բռնեց. Խաց ու գինին, Տէր կենդանին, վորը որ մոռըցաւ իմ քուռակին մէկ կուպալ կը գասեմ։ Տեսաւ որ մարդ չկար։ Հէլաւ դուս, տարաւ էն ֆանդրկներ հէրի յետև թալեց կուրցրեց, էտոնց յանկճներ էլ քոքահան արաւ, բերեց լցեց մէկ քարի տակ, յինքն յիրան միտը արաւ թէ քեռի Թորոսին տամ նշանց (ցոյց)։ Հէլաւ մէ ֆոֆ քար բերեց տուեց հէրի գէմը, կոպալը դանեց գադ-նի մէջ, գրեց թեին, բերեց հորթարածի կուշտը կացաւ։ Ասաւ.

Մի՛ յա, հորթերդ բերեր եմ։

Ասաւ. Բա ուր ա, Դաւիթ, հորթերը։

Ասաւ, թէ էս ա լըցեր եմ գագանը։

Ասաւ. Թող թըց արածեն։

Ասաւ. Ինչպէստ թողեմ, կը փախնին։

Դու իմ հորթերին մուղաթ կաց, տանեմ տէրպէտէր անեմ։ Ասաւ գնաց «Արէք ձեր հորթերը տարէք», բոռաց, ճըչաց։

Ասին. Հուր ա մեր հորթերը։

Ասաւ- Հէս ա լըցեր եմ գագանը։

Դաւթին ասին. Թող տենանք։

Ասաւ. Թողնեմ կը փախնեն, չեմ կանայ բռնի։ Էկէք, մէ մէկ կոտ կորեկ հաբ կայ, տուէք իմ ախպօրը Կիրակոսին, որ տամ։

Ասին. Դի գնոն, կրտանք։

Որ չտուիր մէ կոտ կորեկի համար մէ գեղ կը քանդեմ։

Էտի կը գնայ ցածը։

Ասաւ. Բէ տենանք։

Դրրեց ցածը, տեհան, էփուկ ա, ասին, թէ դու էտ հիշնես արել մեր գլուխը, մեր հորթերը սըպաներ ես, լըցեր ես գագանը էփեր ես։

Էտ էլ ասում ա. Ես չեմ սպանել, գեն ա տարել, էս գագանն էլ ձեր հորթկայ տեղը։

Դաւիթը հա կը գասնայ կուգայ հորթերի կուշտը, կասայ. «Կիրակոս, գնա քո կորեկը ժողվայ, որ չեն տայ՝ ընձի ասաւ։ Էտի կըգայ՝ համեն մէկ մէկ կոտ կորեկ կը բերայ կտայ Կիրակոսին։ Դաւիթը հորթերը կը քցայ յըռէջ, որ տանայ Սասունն, պոչը ու ոտը կը բռնայ կը տփայ էն մէկէլ հորթկայ վրէն։ Քեռի Թորոսը կը գայ յառէջը կասայ. Խալխի հորթերը դու խատրցրիր, էտ ինչ ես անում ես։

Դաւիթը կը վիկայայ կասայ. «Հացն ու գինին, Տէր կենդանին, սուս մացա, կը գանեմ կիջնես յանդուդքը»։ Սասուն հորթ-կոտեց կը մնայ տասնըհինգ հորթիկ. կընանիր յալով կեթան իրանց հորթերը կը բերեն։

Դաւիթը կասայ. «Քեռի Թորոս, որպեղէն մարդ ու որպեղէն տաւար գուս չթողես, որ տանեմ խետս»։

Էդ գեղի մարդիկ կը գան գրյնին քեռի Թորոսի ատը, թէ մեզի կը տանայ կը փիացրնայ, ազատա մեզի էտու ձեռէն։

Քեռի Թորոս կասայ. «Արխային մացէք, ես ձեր խետ եմ»։

Եզները կը ջըլին (ջուլ ձգել վերան), Դաւիթը կըհնգնի յառնչ, քեռի Թորոս կրնկնի եզների յետը, գնգականն էլ քեռի Թորոսի յետը։ Հէլան գացին հէրը. մոան հէրի մէջ ասաւ. «Քեռի Թորոս, էս խապինէն տենում ես, ինչքան քու դուվարը կը յապթայ, վեկալ, ինչ կը ճնայ՝ քասիր քիւսուրի վրայ բաժին արա»։ Ցինքը հէլաւ գնաց քուռկի կուշտը, ասաւ. «Հացն ու գինին, Տէր կենդանին, քեռի Թորոս, որ իմ քուռկին մօտցար, մէ կոպալ կը դանեմ կիչնես յանդունդը»։

Էն մախլուխը ինչ խետն էր էկած, փախաւ։ Քեռի Թորոսն հէլաւ տեսաւ, որ էդոնք փախան, ասաւ. «Ընչ էք փախնում»։

Ասին. Էս ջանդկներ որ արպաներ ա, մեզ էլ կը բերայ խառնայ էտոնց խետ ապանայ»։

Էն էլ ասաւ. Արխային մացէք, ես խապինի տէրն ա։ Մըտաւ ներս, Դաւթին ասաւ. Դաւիթ ջան»։

Ասաւ. Ի՞նչ ա»։

Ասաւ. Քո ապգին դակմա ձի չի դիմանայ, ասաւ, քո պապի ձին էլի Աստծու տուած էր, անուն Քուռկէջալակ էր, էնի տուեր եմ քո քեռուն փէշքէշ»։

—Բա ինչ ես ասում, քեռի Թորոս։

Ասում ա. Ձեռգ ճխտա քամկի վրէն, թէ տղղաւ՝ տու քասիր քիւսիր թրդ տանեն, Աստուած քեզի կը խաստնայ»։

Ձեռը ճրխտեց վրէն, ոտները թալեց հէրի կըտուրը։ Գնաց ձեռները ճրխտեց էն մէկէլ ձին՝ չը տղղաւ։ Դէհ ասաւ, բաշայ էթանք։ Քաշեց, բեռները բռնեց, էկան յիրանց տուն։ Հորթերի թարկը տրուեց։ Էկաւ մէ այհար ասաւ, մէ գեամ ասաւ, սէրը քցեց ձիու վրէն։ Մէ ձեռացագուշ ասաւ, կոպալ գանեց մէջքը, գնաց յիր համար ու անելու մէշէքը։ Իրիկուան քեռի Թորոսը խաղալով էկաւ յառէջը, ձիան դիդկինը բռնեց, Դաւիթն յիջաւ։ Էրեսները պաչեց. «Կեցէ իմ Դաւիթ», ասաւ, «ընձի աւ ես բերէ։ Էս խետ բերեց լոդցրեց, ասաւ ձոցը պառկաւ։ Մէ ան ժամանակ էտենց արաւ։ Մէկ ասոր մէկ օր Դաւիթը հէլաւ գնաց աւ անելու. տեսաւ մէ պառաւ մէկ մշակ ա բրոնէ հանդը ջրում ա։ Արևը բանցրցաւ. Դաւիթը էկաւ, ցրուորի կշտէն մէ լոր թռաւ, բռնեց, մէկ էլ թռաւ, էն էլ բռնեց, խէլի հնցաւ՝ մէկ էլ բռնեց. հէլաւ

պրտրտեց էտ արտի մէջը ձիով. ցեխ արտ՝ յրամէն քոչախան արաւ։

Էտ ջրրուորն ասաւ. Էսի ֆրլան (այս ինչ) պառուի արան ա, ֆիրեք եթում (որը) ունի, էս մէկ արան ա, մեղք ա, դուրս յարի։

Էն էլ ասաւ. Հացն ու գինին, Տէր կենդանին, կը գանեմ կիջնես յանդունդը, թող իմ քեռի Թորոսին աւ տանեմ։

Էտ էլ բախը դրեց թևին ու յետ դարձաւ։ Պառաւը հաց առաւ, էկաւ էտ ջրուորին ասաւ, ասաց. «Գորան (վայրենի) հրնչի դարձար էկար»։

Ասաւ. Դաւիթը սրմբուլներ (կոուի, հասկ) խանեց երկինքը։

Ասաւ. Դեհ հացդ կէ, ես էթում եմ Դաւթի կուշտը։ Պառաւն էկաւ Դաւթի կուշտը, ասաւ. Շնորհուորը տիեմ վրէդ, էդ հինչ ես անում. իմ կորեկի սրմբուլները խաներ ես երկինք։

Ասաւ. Պառաւ, սուս՝ կը գանեմ կիջնես յանդունդը։

Ասաւ. Որ դոշաղ տղամարդ ես, ջոջ Մհերի թոռն ես, Աբամելիքի տղէն ես, ջոջ Մհերը դնաց թուրքման աւերեց, էլը բերեց, մկայ դու իշտա դոշաղութուն ես անում. Մսրամելիքը անիծեց քու խէրիկ, մէրիկը, տարաւ թուրքման էլը, տարաւ մամիկդ, տարաւ խաղինէն, տարաւ Քուռկէիայաթը։ Ղոզրէկն էկաւ ձեր վեց ախպօրը տարաւ ետիր, տարաւ քեռուդ տուած էլը, (ժողովուրդ) տարաւ գրեց Արաբստունը, տարաւ ձեր խաղինէն, էկեր ես իմ ճնճուղներն ես թոցնում։

Էկաւ պառուի կուշտը ճչաց, պառուի ուշքը գնաց։ Ասաւ. Իմալ ընձի ասեցիր՝ քեռի Թորոսին էլ ասաւ։ Թալեց ձիան թարքը, տարաւ։

Քեռի Թորոս պառկուկ էր ճամբի վրէն։ Դաւիթը ձինը լցեց սրտի քրրէն (բարկութիւնից)։ Քեռի Թորոս յիշեց տեսաւ, որ ոչ երկինքն ա, ոչ գետինք, էնպէս ա գալում ա, յինքը փախաւ մըտաւ մէջէքի մէջ, կոպալը քաշեց թալեց յետեը որ սպանայ։ Յինքը ճամբով գնաց, քեռի Թորոսը ծառերի մըջով։ Գացին տունը։ Դաւիթը տիեց պառուին գետինը, ասաւ. Դէ պառաւ, խօսայ։ Տեսաւ պառաւ մեռուկ ա, դարցաւ ասաւ Թորոսին. Փոփակ, ասաւ, հնչի ընձի դրկում ես աւի, չես դրկում քո դուշմին։

Քեռի Թորոսն ասում ա. Քեռ հրնչի խամար եմ պախում, դիւշմի խամար, համա հրա ջահիլ ես։

Դաւիթն ասում ա, թէ ջահիլ մահիլ ես չեմ գինայ, ես պտի ձիուց չիջնեմ, էթամ։

Ասաւ. Իտենց էթաս։

Ասաւ. Բա ինչալ էթամ։

Ասաւ. Քո պապի թագը, գիւրգը, քամարը, համայիլը Մարութենի Մայրամ Աստուածածինն ա, հիմա ասում հատ անծին երինջ տանես մատդես, գահանով, էլլիկով պատրաստ անես, դուռը բացուր, թագը դնես գլխդ, գիւրգը առնես ձեռդ, համայիլը դնես ծոցդ՝ նոր էթաս կռիւ։

Դաւիթ տփեց աղբրբտանքին, խանեց տընից, քեռի Թորոսին կայնեցրեց դռան դէմը, փայէն ճղեց, մէ ճանկ ապ լցեց, որ մոմռայ, չքնի չուռնք լուսը բացուր։

Լուսը որ բացուաւ, բերեց լուաց, բերին գեղ թալին կապին, հէյան դահանէքը, էրինջները, ժողովուրդը առան գացին էնտեղը, յիրանց մատաղը արին. թագը դրեց գլխը, գիւրգն առաւ ձեռը, համայիլը դրեց ծոցը, Քիւրկէջալաթը խէծաւ, (իր պապու ձիու անունը դրէ իր ձիան վրէն)։ Ուզեց ճամբաս հընկնի։ Քեռի Թորոսը դանչեց, ասաւ. «Դաւիթ ջան, արի հաց կէ, յիսի գնաս։

Ասաւ. Անուն հաց իմ փորը չի մտնի, չունք իմ դուշմնի գլուխ կտրեմ։ Դարձան էկան շահարի մէջը։ Դաւիթը նստաւ տանը դանչեց, հայալամիշ հեյաւ, ասաց. «Էթայը իմ ձեռը, գայը Աստծու ձեռը»։ Դարձաւ քեռի Թորոսին ասաւ. «Քեռի Թորոս, ընձի ճամբաքը նշանց տու ես էթամ»։ Քեռի Թորոսը հէյաւ մէ ձի խեծաւ, ասաւ. «Ինանք, ճամբաքը նշանց տամ»։ Հէյան հընկան ճանբաքը։ Գացին հասան Կապուտկոդը, ասաւ. «Դաւիթ ջան, մեր խին վանքանը էս ա, լաւ տեղ ա, վատ տեղ չի»։

—Բա դուք հրնչ էք գացէ Սասուն։

Ասաւ. «Մարամէլիքի ահուն ենք փախէ»։

Գացին Ղրլաթն էլ ընցան։ Դաւիթ տեսաւ որ քեռի Թորոսի ձին իր ձիան խետ չի քելում, ասում ա. «Քեռի Թորոս, քշա»։

Ասում ա. «Ձին չի էթում»։

Ասաւ. «Ընձի ճամբաքը նշանց տու, գու ետ դարձի, ես էթամ»։ Միտք արաւ քեռի Թորոսը, ասաւ. Ղրկեմ Մրսրը վայթը Մարամէլիք Դաւթին ապանայ, ջահիլ ոդայ ա։ Ասաւ. Դաւիթ ջան, գու գաս էթաս Արաբատուն։

Ասաւ. «Հրնչի՞»։

Ասաւ. «Էրկու հազար տուն էլ Արաբատուն ա, գնա քշայ առ արի։ Արաբատունը մէ էլ-ադասի (ժողովրդի պետ) կայ, գեղից էրկու վերստ զատն ա, սիպտակ չատրն էլ զանուկ ա, մէջը մտուկ ա, ոսկի խնձորը գլուխն ա, թէ կառցայ էլը ետ դարձու, առ արի։

Դաւիթը գնաց տեսաւ էլը էտեղն ա։ Բարև տուեց էլ-ադասուն՝ բարև ձեզի։ Էն սհաթին, ոդաթ կար, ձիան գլուխ հելան բրռնին։ Էտի ձիանից յիջաւ, բերին խալին քցին, մենտարը թալին, բարձերը քցին, էտի էկաւ նստաւ։

էլ-ադասին խարցրեց յուսոտ ես։

Թէ Սասունայ եմ։

Վիրբ ազգէն ես։

Վերցրեց թէ Պապ թագաւորի ազգէն եմ, Արամէլիքի տղէն եմ։

Այ ես քե դուբրան հընեմ, դու Դաւիթն ես։

Թէ հա, ես Դաւիթն եմ, Արամէլիքի տղայ Դաւիթը։

Էտուր խաց, փունչ պատրաստին, էտիկ խաց կերաւ, քնաւ։ Էտ էլ-ադասին մարդ դրկեց դանչեց Էլլիկին, ասաւ. «Էլլիկ, ասաւ, էսի Դաւիթն ա, մեր թագաւորի տղէն ա, Մսրամէլիքը էկաւ էստոնց յեսիր արաւ տարաւ, մկայ քեսարրդէ էկէ մեր կուշտը, անմէնքս մէ գաս բնծայ տանք, որ տանայ լիանայ»։ Հեյան անմենքը ասաւար տուին, քէյա տուին, ոշխար տուին, բերին էլ-ադասու գոան դէմը կոլոնին։ Դաւիթը քնաց վեր հեյաւ, իրրուն ու լականը բերին լուացուաւ, հէյաւ գընաց դրի ձին։ Գնաց դարձաւ էկաւ, ասաւ. «Ադա, էս ինչրան ապրանք էք բէրէ էստէ կոլոներ էք»։

— Թէ քեզի բնծայ ենք բերէ։

«Ի՞մայ թէ բնծայ էք բերէ»։

— Շատ ա՝ շատ դարուլ ապա, քիչ ա՝ էլի շատ դարուլ ապա, ապքատ մարդիկ ենք, սրփիթա (նախ) քանդրվեր ենք Բաղդրդայ էկեր ենք Սասունը, Սասունայ էլ Մսրամէլիք բերէ էսաեղը։ Ինդրում ենք քշով շատընաս։

Դաւիթը կասայ. «Բարցէք, ես էկեր եմ ձեզի տանեմ»։

Էտոնք շատ կազաչեն, թէ քանդում ենք. ցահիլները կայնում են որ չիգան։

Դաւիթը կասայ. «Հացն ու գինին, ծէր կենդանին, հրամենիաէլ կը ցարդեմ, իմ էլլիկն էք, թէդ էրէք, էթանք»։

Էտոնց ցոցերը կը կայնին կասեն, որ էտի գոչաղ տղամարդ չէնի, Մսրամէլիքի ձեռնէն մեզի չի տանայ։

Էլլիկը յաշեց, առաւ էկաւ Սասուն։ Ճամբին, մէ տասը պառաւ նեղանում են, նըստում են յաղբրի վրայ, Դաւիթը էլլիկը քաշում բերում ա տուն։ Քեռի Թորոսը տէրբէտէր ա անում ա, նստցնում-ա անմէնքը յիրա տան մէջը։ Քամակից Մսրամէլիքը մէ հազար ձիաւորով Ղոզրէկին դրկում ա, որ էլը ետ դարձնայ, Դաւթին սպանայ։

Ղոզրէկը էկաւ, յաղբրի վրէն նստուկ պառվներին բարև տուեց։ Պառվներն ասին. Դեր ես էթում, Ղոզրէկ։

Ասաւ.

Էթում եմ Սասուն ու բան,
Խորս ու աղջիկ բերում եմ արմաղան,

Կարճ կարճ կնանիքը տախտ աւին,
Երկէն երկէն կնանիքը գլուխնտ բաշեն (պարեն),
Կարմիր եղներ լծի,
Կարմիր կովեր կթի։

Խէր հնի, Ղոզրէկ, գնա, ասին պառվրները, ու նատան տեղերը, ասին էլ ինչ էթանք, Ղոզրէկը մկայ Դաւթին կը սպանայ, էլը յետ կը դառնայ։

Գնաց Ղոզրէկի դոշունը կռիւ արաւ իրտ Դաւթին։ Էտ վախտը քեռի Թորոսը հէլաւ ծիլ պալի (քարափ) գլուխը, Դաւթի կռիւը չէր տեսէ, յիրիշկաց տեհաւ հինչ որ հացի պէս գերնդին առնեն բրդեն, Դաւիթն էլ դոշունը բրդում ա, փառք տուեց Աստծուն։ Ղոշունը խլրաւ, Ղոզրէկն ու Դաւիթը առան յիրար։

Քեռի Թորոսը ասաւ. «Դաւիթ, Ղոզրէկը փախաւ, ձիան պոչը բռնաւ։ Դաւիթը ձիան պոչը բռնեց՝ քոքահան էլաւ. Ղոզրէկին վէկալեց ձիան խետ տփեց գետինը, ուր դրեց փոքինը, մէ ձեռով բերանը ճիտեց բացեց, լեզուն քաշեց քոքահան արաւ, առրմներ քաշեց շարեց ճակատը, հուսունվերկու առամը, վեկալեց դրեց ձիան վրէն, ասաւ. Դնա Մարամէլիքին խոբար տար։

Ղոզրէկը հէլաւ գնաց, էլի պառվրներուն յրռաստ էկաւ, ամչցաւ, հան տուեց պառվրներից։ Պառվրների մէկը վադէ վադ գնաց Ղոզրէկի յառեջը, ասաւ. Խէր բլլի, Ղոզրէկ, գոր ես էթում։

Հընչի դացիր գէլ ու գազան,
Դարձար էկար քընց շուն վազան,
Բերնէդ կէթայ չորթնի թան։
Գլոխդ գոմշի ա,
Ոտնկճներդ իշի ա,
Ոտներդ գէաւի ա,
Պոչդ ջորու ա[1]։

Ղոզրէկ չկրցաւ ջուդար (պատասխան) տար։

Պառվրներ յետ դարձան գացին Սասուն, Ղոզրէկ գնաց Մսըր։ Գնաց թուգթը գրեց, չկարցաւ լեզուով ջուդար տար, լեզուն կտրուկ էր. թուղթը տուեց ադրորը, յիրիշկաց տեսաւ թէ գրուկ ա ես Մարամէլիքի փէսէն եմ, ամօթու չեմ էթայ էնդու է-

[1]) Վարիանտ.—Քիզաճիուում Ռարութիւնը պատմում էր, թէ Ղոզրէկը պատասխանեց.

Սասունայ բոլոր քար ու կապան,
Մարդմ՝ է էլի գազանական.
Դրրի մը կը ջցայ խազարական,
Գացէք ոպանուոդների պլորտանը բերէք
Ձեզի էրէք եզ ու չորթան։

բես, ընձի պատիվ, ասէք Ղոզբէկը սպանուեր ա, ձինը էկեր ա։ Դացին ասեցին, յաշին ձինը տարան. ասաւ, այ հայ, էս ինչ բան ա, ձիան պոչն ա խնտը կերեր ա։ Բա Ղոզբէկն ինչ ա հէլէ։ Թէ չկայ։ Վեկալում ա Մսրամէլիքը ասում ա, թէ սուս ա, տունն ա, ասէք գայ։ Ասում են էթում են, որ առըմները շարուկ ա ճակատը։ Մսրամէլիք դանչում ա իրան մօրը թէ արի տես։ Մէրն ասում ա, թէ ես ինչ անեմ։ Վեկալում ա ասում ա. Էս քո արածն ա, էն վախտն որ թողիր Դաւիթը սպանի, էս օր էս բանը իմ գլուխը չէր խանէ։ Էս խետ ամէն թագաւորից գոշուն կուգեմ, կեթամ Դաւթի վրայ կռիւ։

Մէրն ասում ա. Ձեռ վեկալա, մի գնա։

— Հրա իմայ անեմ որ չնթամ։ Ձեթամ կը գայ ընձի կը բրթայ։

Էտի թող գոշուն գրատայ, գանք գրիս Դաւիթը։

Դաւիթը Ծռան Վեթօին արաւ թագաւոր, յինքը ձինը խէնաւ գնաց աւ անելու։ Մսրամէլիքը վեկալեց գոշունը էկաւ, Սասնայ չորս բոլորը քունեց կացնաւ։ Էկաւ ութանասուն ջան յզրկնց Դաւթի կուշտը, ասաւ. Գացէք տասը հարս ու աղջիկ բերէք, խինգը իմ ոտները մաժայ, խինգն էլ էրեսիս ճանճերը քշայ։ Կոտը տուեց թէ տասէն մէկ բայրա առէք ոսկի։

—Էտի, խարցրին, ինչ մասի աւ։

—Որ վախենայ՝ կը տայ, որ չվախենայ՝ չիտայ։

Էկան էտ ութանասուն ջանը Ծռան Վեթօին թէ մեր թագաւորն ասում ա տասէն մէկ բահրայ տայ։ Տասը խարս ու աղջիկ տայ, խինգն էրեսիս ճանճերը քշայ, խինգն էլ ոտներս մաժայ։

Ծռան Վեթօն տուս խաւ հարս ու աղջիկ բերեց, խազնի (գանձի) դուռը բացեց, որ մտնեն մէջ, կոտը առաւ որ ոսկին չափէր։ Դաւիթը գալում ա որ մտնի շահարը (քաղաքը) տեսաւ որ շահարի չորս բոլորը շամ չրաց ա, կրակ ա վառում, երկուղ արաւ, ասաւ՝ էս ինչ ա բռնած իմ վրէն։ Էկաւ ձինը տուեց քեռի Թորոսին, էկաւ մտաւ ներս, խազնի դուռը տեսաւ բաց ա, յիմացաւ թէ խազնէն թալնում են, բռնաց ճչաց։ Բռնալու քիմին (պէս) Վեթօն կպաւ յառքից, հնկաւ գետին, ուշը գնաց։ Էկաւ Վեթօին վեկալեց շպրտեց դուս, խարցրեց էտ մախլուխին. Դուք հրնչ էք էկէ։

Ասին թէ էկեր ենք տասին մէկ բահրա տանենք Մսրամէլիքին, տաս էլ խարս ու աղջիկ։

Ծռան Վեթօն ուշքի էկաւ, ասաւ, Դաւիթ, դու իր։

Ասաւ. Հրամանք ա քեզ, ես իր թագաւոր։

Նոր էտի ասաւ. Փորս գնաց վրէս։

Գնա լուացուր, լոգցի. Ծռան Վեթօ։

Դաւիթը գնաց գանեց կոտի ոտը քցեց, տեսաւ անոտ ա, գաւտ չպտի կայնի մէջը, չափեց, տասը չափեց, ասաւ. Զվալը բերէք մէկ էլ լցեմ ձեզի՝ տարէք։

Չափեց ասաւ՝ բոլ ա։

Ասին. Զատ կայ մէջն որ բոլ հլնի։

Ութանասուն ջանն էլ գանչեց խանեց դուս, որ խանեց բերեց բերդի կուշտը կայնըցրեց, խինգանասուն (յիսուն) ջանը մէկ մէկ թալեց բերդի էն եանը (կողմը) ցխեց (սպանեց), Ինաց եոսուն ջանը, տասի գոլթուղի տակը ծակեց, թևերը քցեց մէջը, տասի էլ մէ մէ թեր կտրեց, մէկ մէկ թողեց, տասի էլ մէկ մէկ յաչքը խանեց, մէկ մէկ թողեց։ Դէհ գացէք խաբար տարէք Մարամէլիքին։ Էտ եոսուն ջանը հելան խաբար տարան։ Մարամէլիք էտ եոսունին խարցրեց. Ցուր ա ձեր մախլուխը։ Էսանք գանգրտուոր հելան։ Ասին թէ էն վախտը դրկիր կուսի մէջ, մենք էս գտար չինք ջարդուէ, խինգանասուն ջանը բերդից թալէ ջարդեր ա, տասը ջանիս թևերը կտրեր ա։ Տասը ջանիս յաչքերը խաներ ա, տասը ջանիս էլ գոլթուղները ծակէ թևերը քցեր ա մէջը։ Հէյաւ Մարամէլիք կայնաւ գոշունի մէջը, ասանրխինդ խոզար ջան ա, հա գուրրան ձեզի որ Դաւթին բրդէք։ Ջանք-գհոլին (թմբուկ) գարկին. մտան մէյտանը։ Քեռի Թորոսն առաւ Դաւիթը հելաւ դարի գլոխը։

Քեռի Թորոսին Դաւիթն ասաւ. Էս ինչ արիր իմ գլոխը։

Ասաւ. «Հնչի՞»։

Ասաւ. Էն վախտը որ դրկում իր Արարատուն, կնթի Մորը, էսքան մախլուխ չէրգի իմ վրէն։

Ջոջ Մաերայ թոռը չես էմալ ա, Դաւիթ, Արամէլիքայ ա տղէն չես. ասաւ քեռի Թորոս, երկուղ ես անում։

Ասաւ. «Բա չե՞մ անում էսաւ մախլուխի մէջը»։

Քեռի Թորոս վաղաւ մէ ծաւ քոքախան արաւ, դրեց թևին՝ առաւ էկաւ ասաւ. «Լաւ մարդ եմ, Դաւիթ ջան»։

—Բա, ասաւ, փիս մարդ ես, մէ ծաւ քոքախան արիր։

Ասաւ. «Բազի մարդ կայ յինքն ոըժրար ա, էթում ա արտը քաղում ա, բերում ա լցում ա կալը, հմէն հափը թալում վրէն, կայ քշտը մտնում ա մէջը ջարդում ա, ասում ա, Բուռեէջալաթ քու տակն ա, համայիլը քո ծոցն ա, խրեդէն թուրը դրոֆիդաւ քո ձեռն ա, գանչա Մարութենի Մայրամ Աստուածածին, հոլինները հա կրտամ վրայ ծառով, գու էլ բրդաւ։

Երեք որ կոխ արաւ, գիշեր ու գերեկ, Քեռի Թորոսը հաար չթողեց, տուեց վրէն, Դաւիթը գանչեց Մարութենի Մայրամ Աստուածածին, համբնին բրդեց։ Ջիուն ոռներ չունք չոքեր

արնի մէջ մնաս։ Մսրամէլիք ընդոնց խետ էկաւ, Դաւթի խետ կռիւ արաւ, յիրենք օր էլ էտ կռիւ արաւ՝ հէլաւ վեց օր։ Զաղդում Դաւթին, լափով (խորամանկութեամբ) ա կռիւ անում. ասում ա. Վեց օր որ թմրմաս, դու գնա քո տունը, ես էլ էթամ իմ չատրը, դինջանամ։

Էն ինչ Դաւիթն ա՝ խաղալով էթում ա յիր տունը, ձինը քեռի Թորոսը բռնել գեամը տանում ա։ Էն ինչ Մսրամէլիքն ա՝ միտը ա անըմ ա, գալիս մօրն ասըմ ա. Մէրիկ, ես չեմ կանում Դաւթի վրէն, գոշտեր բիրդան բրդեց։

Մէրն ասաւ. Վէկալա ընձի առ դնա Մըսրը։

Ասաւ. «Ինձալ էթամ. երկրի մէջ չեմ կանայ ապրի, աշխարհքը բրդեր եմ. յառաւօտ չունք կէսօրին կռիւ կանեմ, կէսօրնէ յետ կը կայնըցնեմ, կասեմ դու չոքի ես գանեմ, ես չոքեմ դու գան։ Ջան շիրին ա, նա էն (ոչ նա) կը չոքի, նա (ոչ) ես։ Քեռի Թորոս խելքով մարդ ա, խոճով մարդ ա, քեռի Թորոսին կէթամ կասեմ. Ես չոքեմ թէ Դաւիթը չոքի։ Խիոճով մարդ ա, գինում ա ես ծեր մարդ եմ, կասայ, Դաւիթ, դու չոքիր Դաւիթ, չոքաս՝ Դաւթին կսրպանեմ, քեռի Թորոսին էլ կսրպանեմ, Հայաստուն կը կտրեմ, վեկալեմ մէրս էթամ»։

Ցառաւօտն էկան մտան մեյտան (ասպարէզ), Դաւիթն ու Մրսրամէլիք չունք կէսօրին կռիւ արին, կէսօրն յետ Մսրամէլիք ասաւ Դաւթին. Ես չոքեմ դու գան, դու էլ չոքի ես գանեմ։ Նա (ոչ) էն չոքաւ, նա էն։ Քեռի Թորոսը էնտէ կայնուկ էր. Մսրամէլիք գնաց քեռի Թորոսի կուշտը, ասաւ. Քեռի Թորոս, վերն Աստուած, ներքն դու, դիպ դատաստան դու դի, ես չոքեմ Դաւիթ գանայ, թէ Դաւիթ չոքի՝ ես գանեմ։

Քեռի Թորոս միտք արաւ, ասաւ. Մսրամէլիքը ջոջ ա, Աստուած գարուլ չի անայ, թո Դաւիթը չոքի։

Դաւիթը չոքում ա, Մսրամէլիք դոլանը (փորքաշ) պնդում ա, մէ վերստ ճամբախ էթում ա, որ լցայ ձինը գայ գանայ։ Քեռի Թորոսը տսրմ ա. «Դաւիթ ջան, համայիլը պարգա դի ճակտիդ»։

Ձինը գեռինը քանդում ա։ Մրսրամէլիք գալըմ ա՝ դարրը (թուրը) թալում ա, Դաւիթ վեր ա թրռնում, ասրմ ա. «Ցարի դու չոքի, էս խետ իմ դոլն (հերթ) ա, ես պաի գամ»։

Մսրամէլիքն ասում ա. Մանկան (երեխ՝ օրէնքը, ագաթը) յիրեք ա, հրլա էրկու խետ էլ թալելու եմ։

Էրկու խետ էլ էկաւ թալեց։ Դաւիթ հելաւ կանաւ։ Մսրամէլիքի մէրն հնկաւ Դաւթի ոտը. «Քեզի վեց ամիս պախեր եմ, խնայա»։

Վեկալեց Դաւիթը ասեց. «Մէ դարը բաղշի քո պախելուն,

մէկ էլ բազդի Աստծուն, մէկ էլ գրիգրտալէն էն հրեշտակը յիշնի կը թալեմ իմ դարբը, չեմ խնայի։ Ասաւ. Ինչքան իսանի (մարդու) ջանդակ (դի) կայ քէ կոլոնայ տղիդ վրէն, դարբս կը թալեմ, բոնեց բոնեց, չբոնեց չբոնեց։

Բերեց ինչքան իսանի ու ձիան ջանդակ կար կոլոնեց Մարամէլիքի վրէն, դառնաւ մէ դարս։ Դաւիթը դանչեց Մարուխենի Մայրամ Աստուածածին, թուրը թալեց, քեռի Թորոս ուզում էր ձեռը տէր դէմը, ասաւ. Հը՞նչ ես ձեռը տալրմ դէմը։

Ասաւ, թէ ես ուզում եմ, որ ես գլխի եանէն կայնես, ես ոտների եանէն, որ թուրը թալես՝ կիսես, քրգեմ դափան (կշիռ), տէնամ բարը կը գայ քո գոչագութիւնը։

Ասաւ. «Ես էսքան ջանդրկի վրայ ի՞մալ թալեմ որ կտրեմ կիսեմ»։

Ասաւ. «Քո տղամարդութենդ նոր եմ ջորում, որ թալես կիսես՝ նոր գոչագ տղամարդ ես»։

Դաւիթը թուրը թալեց՝ կիսեց. բերին քցին կշեռը՝ բարեմբար դուս էկաւ։ Քեռի Թորոսը խասաւ Դաւթի հէրեսը պաչեց կեցէ իմ թոռը։ Հէյան առան Մարամէլիքի մէրն էկան յիրանց տունը. մէկ աւ ժամանակ պախեցին, մէկ չորս տարի պտխեցին, օրերի մէկը Մարամէլիքի մէրը վեկալեց ասաւ, թէ Դաւիթ, ընձի որ լաւութեն անես, Մըսրը կը տանես, ես չեմ կանայ էստե հայի մէջ թափ անի (դիմանայ)։

Քեռի Թորոսն ասաւ, թէ Դաւիթ, դու մի տար, մարդ կրդընեմ խետը թո էթայ։

Ասաւ. «Զըլնի, ասաւ, ես կնթամ»։

Ասաւ. «Ի՞մալ էթաս, ընդեղի ջուրը գօրեղ ա էստեղի վրայ, քեզի կը վնասեն, Աստուծայ ճրագը կ՚հնգնի։ Ես Կապուտկոդ մացէր եմ, Կապուտկոդայ բլոճն ալ կոտշով ա, ես չեմ ուզի էթաս էնտե վնասուես»։

—Ետացն ու գինին, Տէր կենդանին կէթամ, ես յորթում եմ կերէ որ տանեմ Մարամէլիքի մօրը պախեմ, տղին սպաներ եմ՝ պախող չկայ։

Հելաւ քեռի Թորոսի խետ խալալամիշ հէլաւ, ադրբանքի խետ խալալամիշ հէլաւ, էլլիկին դանչեց խալալամիշ հէլաւ խետը, թէ մացէր բարով, ես էթում եմ։ Մէ ձի Մարամէլիքի մէրը խեձաւ, Դաւիթն էլ յիր ձինը խեձաւ, գնաց Մարը դուս էկաւ։

Մարամէլիքի մէրը ասաւ. «Դաւիթ, գոր ես էթում, Մարը նստի թագաւորութուն արա, Վանը, Կաղզուանը, Կապուտկոդը ճնայ քո ձեռը, Աստուն էլ թո ճնա ճուան վէթոին»։

Դաւիթը ուզի հէլաւ, նստաւ թագաւոր։

Էս վախտ Արաս Միրզէն էլ Կադգուան էր թագաւոր, մէ աղջիկ ունէր անուն Խանդուդ խանում էր։ յիրարուց բեխաբար, Լօռու Համզէն եկեր էր որ Խանդուդ խանումին ուզէր իր տղի խամար. Շապկով Խորասանին էլ էր էկէ ուզելու։ Լօռու Համզու պուռնկը կախուել էր գոշի վրէն, էնենց բէօ մարդ էր, Շապկով Խորասանին էլ յաշքի թարթփնէր չանկըլով քաշեր էր յեսանը կապեր էր պուճուճակի (ծոծրակի) վրէն։ Էկան էրկուսով էլ հանդրպան յիրար, ճամբի մէջ տեղը, Լօռայ Համզէն, Շապկով Խորասանին։ Յիրար բարև տուին. Լօռայ Համզէն Շապկով Խորասանին ասաւ. «Ի՞նչ ես էթում, թագաւոր»։

Ասաւ. էթում եմ Կադգուանը։

—Հրնչ ես էթում Կադգուանը։

—Ասաս Միրզի աղջիկը ուզեմ իմ տղին։

—Թէ ես էլ եմ էթում։

Յիրանց յիրանց խօսում են, ասում են, որ մէկիս թալախը (բադդ) կտրեց, թող ընդուն տայ։ Էկան էգ մարդի տունը։ Ձեռ տուին յիրար։ թամանդա (ծանօթացան) հէլան յիրար խետ։ Տեղ առեց էրկու թագաւորն էլ նստան։

Խաբսրեց թէ թագաւորներ հ՞ընչ էք էկէ։

—Ձեռ յիմանում թէ հր՞նչ ենք էկէ։

—Թէ չէ։

Լօռայ Համզէն ասաւ. «էկել եմ քո աղջիկը ուզելու իմ տղին».

Էն էլ ասըմ ա. «Մէկը կայ, էրկուսն հր՞նչ ա էկեր ա»։

Ասըմ ա. «Յիրարուց բեխաբար ենք էկէ. ճամբէն էկեր ենք առեր ենք յիրար»։

Ասըմ ա. «Թագաւորներ, գլխներիդ դուրբան, էտի աղջկայ բանն ա, որ մէկիդ տղին կառնի թօ առնի, ես չեմ կանայ ձեզի ջոկի, ջուխտըդ էլ թագաւոր էք»։

Շապկով Խորասանին ասըմ ա, թէ մենք խնդրում ենք, քո աղջիկդ դայ կայնի մեր կուշտը, որ մէկիս տղին առնի՝ առնի։

Ղանչեցին բերին Խանդուդ խանումին, խարցրին, թէ Խանդուդ խանում, ո՞ր մէկի տղին կառնես։

Ասաւ. «Նա (ոչ) Լոռու տղին կառնեմ, նա էնդու տղին կառնեմ»։

—Ընչի՞ չես առնում։

—Ասաւ. էրկու թագաւորը ես չեմ կարայ յիրարուց ճխտի, ես մէ աղջիկ եմ, մէկի կառնեմ, նա (ոչ) Լոռայ Համզէն յրուրկի (խոռվի), նա Շապկով Խորասանին յրուրկի։ Ասըմ ա, էրկուսի մանչերն էլ թօ գնեն իմ կուշտը, էրկուսն էլ էթան զօշուն բերեն,

գան հօրս իւրտի մէջը կուլ անեն, որ մէկը յաղթ հէլաւ, ես էնդու տղին առնեմ։

Էտունք հընում են, թոդրմ են էթում են։ Մէ առ ժամանակ մընում ա. մէ ձէն ա գալիս ա Խանդուդ խանումին, Սասունայ Դաւիթ անուր, քանի տարեկան ապայ Մարամէլիքին սրպաներ ա, շատ դոչաղ տրդայ ա։ Ադջկայ միտքը փոխում ա, ասում ա. լաւն էն ա որ ես ընդուն խարար առնեմ կայ ընձի առնի, էն ա ընձի արժանի։ Խանդուդ խանումի խինդ գազ լէնքն ա, տանն էլ յեր-կէնքն ա։ Հելաւ յիր շաքիլքը քաշեց, ասաւ՝ վորր տանայ Սասուն տայ Դաւթին, յիր քաշով ոսկի կրտամ։ Տուրուս (սիրտ) անդ չկայ որ էթայ, երկուդ են անում Դաւթից։ Մէ աշըդ կար Կագրգուան, աշդին կրկանչայ, կասայ. «Էս շարիլքը տար տու Սասուն Դաւթին»։

Աշուդ կը վեկալայ կասայ, թէ թմայ ես վեց ամիս էթամ, վեց ամիս գամ, ճժոգ տէր եմ, չեմ կանայ էթայ։

Կըրեբայ Էտուն կնատըցընայ կշրոքի թայը, մէկէլ թոյն էլ ոսկի կրլցայ թէ տար քու էրէխէքդ պախա։

Էտ աշըդը շարիլքը կը վեկալայ օսանաթ (նոյն ժամին) կրգնայ ծոցը, գեղէ կէթայ։

Գնաց Ղլաթայ գուս էկաւ։ Ղլաթայ մարդը խարցրին թէ հոնտա եաւ։

Ասաւ. «Աշրդ մարդ եմ»։

Ասին, որ աշրդ ես մեղի նադ անես։

Ասաւ. «Բանիս անունն հիչ ա»։

Էտ մարդը կայնաւ թագաւորի ամարաթի տակը նադ արաւ։ Թագաւորը Շրմշիկ-խաթունն ա, մարդը մեռէ, յինքը նստէ թագաւոր։ Ցիրիչկում տեսնում ա, որ էտ աշդի ծոցը մէ թուդթ կայ. դանչում ա վերև, տեղ տալրմ ա, էտ աշրդը նստում ա, ասրմ ա. դոր ես էթում։

Աշուդն ասրմ ա. «էթում եմ Սասունը»։

—Քո կշտին հիչ թուդթ ա։

Վեկալրմ ասրմ ա. «Դէ ես իմ (ինչ դիտեմ), մէ շարիլք ա»։

—Բաց տեսանը։

Առնում ձեռ յիշկում ա՝ ապրի գարար (մեծ չափագանց) բան ա։ Շրմշիկ խաթուն միտք ա անրմ, թէ էտ աշրդը թո էթայ, բալքի Դաւիթ բերայ, ես ձեռքէն առնեմ։ Կասայ, ինչ մուրազ ունես գնա կատարա. էրկու խոքի կը բռնայ ճամբի վրէն կը կայ-նրգնայ թէ Դաւիթ անուր տղայ կրգայ, ասէր թագաւորը դանչում ա։

Էտ աշրդը կլնի կեթայ Սասուն, որ մանի Սասուն, առնում ա

մէկ աւ տնոց էն գէհէն գալիս աւ։ Էս աւ անոց կը խարցնայ թէ հէնչ մարդ ես։

Կասայ աշըղ եմ։

—Ո՞ր եանէն ես։

—Կապրգուանայ։

—Գաղգուան որ եանն աւ

—Կապուտկոդայ վերին աւ։

Յիլաւ ձիանից քաշեց դրրի տակ տփեց։

Էտանց բլոճը, քեռի Թորոսը ասում ա կոտոշով ա, եաւաշ տփեմ։ Տփեց, Թալեց մէ փոսի մէջ։ Գնաց քեռի Թորոսին յիմացրեց թէ մէ աշըղի տփեր եմ Թալեր եմ փոսը։

«Հը՞նչ ես տփէ էտ աշըղին, յուստ էր»։

—Կապուտկոդայ էր։

«Ասդն իմ գլխին, ասըմ ա քեռի Թորոսը, Դաւիթը աշխարհը քանդեց չէկաւ ընձի պարծենէր։ Էսի մէ աշըղ ա տըփէ՝ էկէ պարծրնում ա»։ Դառնում էրկու ջահիլ ոդի ասըմ ա. «Գացէք, էտ աշուղը բերէք, պախենք, մեղք ա»։ Գալիս են որ տանին էտ աշըղին, ասըմ են. «Բեգի վերն ա տըփէ»։

Ասում ա. «Դաւիթն ա ափէ»։

Ասըմ են. «Դաւիթ դաս չէ, յէնա Մըսըր ա»։

Էտ աշըղը կը սադնայ, կասայ. «Էլ էտ շարը չեմ գայ մանի, ընձի կը սպանեն»։ Ետ կը դառնայ կեթայ Մըսըր։ Կեթայ Մըսըր, շաքիլը կըտայ Դաւիթին։ Դաւիթ շատ կուրախանայ, կեթայ Մարամէլիքի մորը կասայ. «Քեռի Թորոսը ընձի դանչեր ա, դու մայ էտեղը, թագաւորութենը դու արա, ես էթամ»։

Խնձնում ա ձինը դալիս ա որ էթայ Սասուն, շաքիլն էլ ծոգն ա, տանում ա ասայ քեռի Թորոսին։ Գալիս ա Ղլաթայ կարճեցի վրէն, էրկու ջահիլ գէմը կայնում են. ասըմ են. Դու վերն եա

Ասըմ ա. Ես Դաւիթն եմ։

—Սասունայ Դաւիթն ես։

—Թէ հա Սասունայ Դաւիթն եմ։

—Հրամեցի մեր թագաւորը քեզ դանչում ա։

Առնում են, էթում են։ Տանում են վերն, ձինը քաշում են խաս թաւլէն։ Էթում նստում ա, տենում ա որ մէկ ոդյուշաղ (կին) ա, թագաւոր չկայ։ Դաւիթը կայնում ա թէ յուր ա թագաւորը։ Շմշիկ խաթունը ասըմ ա. «Թագաւորը ես եմ, թագաւորը վախճաներ ա։ Ասում ա, թէ խաց կեր։ դոր որ կէթաս դնա»։

Բերայ խաց կը կերցնայ Դաւիթին։ Դաւիթ խաց կուտայ պրծնի, կասայ- «Ջինը քաշէք դուս ես էթամ»։

Կասայ. «Մութն ա, դոր էթաս, յէսոր մի՛ էթայ։ Գիշերը Ռնայ

էստեղ։ Դաւիթ, ասում ա, իմ խնդիրը կարում ա, որ դու էթում ես էս շաքիլքի յէտեր, քեզի խափում են, տանեն ֆնասեն, էտ մեծութեանին ադջիկ չլնի։

Վեկալում ա ասում ա. «Չլնի, պտի էթամ»։

—Ասում ա յարի ընձի առ Համ թագաւորի կնիկ եմ, համ էլ յաւ օղլուշաղ (կին) եմ, կափսոնայ (կը կախարդէ) էտ թէ ընձի հնչի՞ չես առնում հա, թագաւորութիւնը քեզի, էս յոխանն (ժողովուրդ) էլ քեզի։

Դաւիթը մէ վախտ կը մնայ Էտու կուշտը։ Մէկ որ Դաւիթ շաքիլը կառնի ձեռը կասայ. «Այ հայ, չելաւ, քեռի Թորոսը ընձի ինչ կասայ, ազապ ադջիկը թողեմ գամ որփեվրի (այրի) առնեմ»։ Կրթողայ Շըմշրմիկ խաթուն, կեթայ Սասուն։

Հելաւ գնայ Սասուն, քեռի Թորոսը, ադրբուանը, էլլիկը ուրխցան Դաւթի վրէն։ Մէկ առ ժամանակ մնաց Սասուն, ասաւ. «Քեռի Թորոս, էս շաքիլքը առ թայմին արա, տես ինչ ա»։

Քեռի Թորոսը տեսաւ շատ զարմացաւ։ Ասաւ. «Դաւիթ ջան, էս հոնստ ա հնկէ քո ճանկը»։

Ասում ա. «Կաղըղուանայ ա էկեր ա, Արաս-Միրզի ադջիկն ա։ Բա իզին կը տաս էթամ բերեմ»։

Ասում ա. «Չէ, իզին չեմ տայ, թե կը տանին, կը ֆնասեն, քեզի խափում են»։

—Չըլնի, ես պտի էթամ։

Վեկալնում ասում ա, թէ էնտեղ շատ գոչաղ մարդ կայ, քեզի խափում են տանում են, որ փչացրնեն, մի էթայ։

—Քեռի Թորոս, Դաւիթն ասում ա, դու ընձի ասում ես մի էթա, իմ ուղամարդութենն էլ չատի որ չեթամ։

Հնում բոյոր մախլուխը գանչում ա, ասում ա. «Ախպրտանք, յիրար խետ խաց ենք կերէ, էթայն իմ ձեռը, գալը Աստծու ձեռը, ապօթք յիշացէք»։

Հնում ա խեծնում ա քուռկէջալաթը, գանչում յիր ատեղծոգ Աստուածը, հնկնում ճամբախը, մէ առ ժամանակ էթում ա, Ղլաթայ մոտենում ա, տեսնում ա մի գոմշի կու, ինքն իրան փիքր ա անում, ասում ա. Քեռի Թորոսի ասած կոտշով բլոճը կուած կլնի. կուն որ ըսպտար ա, ինքը հինչ պտար կլնի. նա ընձի կսպանի. մէ քիչ էթում ա տենում ա, որ չորս հատ գոմէշ մէկ պատի տգայ քշում ա։ Թարցնում ա, թէ պատիկ ջան, էտ սեերն ինչ են. կոտշով բլոճ են։

Ասաւ. «Չէ, գոմէշ են»։

Ասում ա. «Հընչի՞ խամար էք տանում էք Էտոնքա»։

Ասում ա. «Տանում ենք գութան լթենքա»։

Փշա էթանք տենանք Ի՞մալ էր լծում էր։

Տղէն նշանց ա տալում ա, ասըմ ա լծնիրը փոռուկ ա, գութանը էսենց լծում ենք, բշում ենք։

Ասում ա. «Դու մենակ ես»։

Ասում ա. «Չէ, էնա պառկուկ են, քնուկ են պիշերարածները, մանկան էլ խնտրը»։

Ուտենս ասենս գաս տենանք։

Ղանչեց ընկց, բարև մնայ հէլաւ հետը։

«Տղերք ջան, Դաւիթն ասաւ, էս գութանը, որ բանցնում էր, կուշտ փորով խաց կը տաք որ օխտը փաթ պըտըտեմ գութանը»։

—Եփոը օխտը փաթը պրտրտիր, յէս օր օխտը ջանիս փլաւ կգայ, կտոնք կուտես։

Լծնիրը յարձրկեց, թալեց դէն, համոլի լուծը դրեց ձիան պաշը, գանչեց Մարութերի Մարամ Աստուածածին, օխտը փաթ պրտրտեց։

Էն պատի խոտագն ասաւ. «Էտ քու հիւնարը չէր, քու ձիան հիւնարն էր»։

Օխտը փաթ էլ ձիանից յիջաւ պրաբտեց։ Ճեսաւ որ էրկու խատ ոդլուշաղ մէկը հացն ա առե, մէկը փլաւ՝ էկան։ Օխտը ջանի խացն ու փլաւը մենակ քաշեց հաուէջը կերաւ։

Էն պատի խոտագը ասաւ. «Հնչի՞ մէ խաց էլ չթողիր մենք ուտինք»։

Ուանեց մէ հատ ոսկի տուեց, ասաւ. «Էտոնք չխոսացին որ խոսացիր»։ Հէլաւ գութնի ոաթըփը կոլոնեց, իր մտքով գանչեց Մարամ Աստուածնայ, թէ իմ թուրը էս բոաթփը կտրեց, կեթամ Ուանդուդ խանումը բերեմ, որ չկտրեց, յետ դառնամ։ Գնաց թուրը թալեց՝ կտրեց, էտոնք ասին վայ, յախսով (վարձով) ենք գութան բերէ, գու հնչի՞ թուրը թալեցիր կտրեցիր, քասիր մարդ ենք։

Ուանեց մէ ճանկ ոսկի տուեց, ասաւ. «Կը շինայ»։

Ասին. «Կշինայ»։

Հէլաւ ձինը խէծաւ հընկաւ ճամբախ։ Շատն ու քիչը Աստուած գինայ, գնաց։ Մէկ առ ժամանակ գնաց, գնաց Կապգուանայ դուս էկաւ։ Մութը տուեց վրէն, գնաց մէ բաղի թուշ հէլաւ, ասաւ, մտնեմ էս բաղի մէջ, ձինս թո էստի արածայ, ես էլ գիշեր սըթրեմ էստե։ Դու մի ասա էտի Արաս-Միրզի բաղն ա։ Ջինը հընկաւ տաշնակները քանդեց, յինքը նըստաւ յապրրի վրէն խաց կերաւ։ Բազվանչին Գորգէնն էր, էսենց բախը վնկալեց, յետանց գանեց Դաւթի քամկին։ Դաւիթ շիտկուաւ, բախը թալեց՝ էկաւ վերստ ճամբախ գնաց, գանեց Գորգու յէրեսին, յէրեսը թէքուաւ

յետեր, վիզը ծռու

Ախար դու խարդընիր տենիր վիր ագջիկն ի, բայքի Խայի աղջիկ չի, նոր ընձի պաչիը, ես էլ ջուղաբր տի։

Դաւիթն էլ վեկայից ասաւ. «Վրէս հնցաւ, դէհ հէլի էթանք յաղի օթախը»։

Գայլին նստան։

—Դաւիթ ջան, ասաւ Խանդուդ խանումը, մարդի կշռանքով ոսկի եմ աուէ, շարիլլա պրկեր եմ քեզի։

Էն էլ ասում ա. «Շատ շնորհակալ եմ»։

Խանդուդ խանումը ասում ա. «Ամ քեզ հաւան չրինի, էս շարիր չի յորկի քեզի համար. էրկու թագաւոր էկած են ընձի ուզնկան։ Մէկի անուն Լոռայ Համզի, մէկի անուն Շապկով Խորասանի։ Էրկուսի մաննիքն էլ դրեր եմ խօրս կուշտը, որ էրկասով դուն կոխ, որ մէկն յաղթ հէլաւ, ինդուր առնեմ։ Մկայ քո ձէնն էկաս խասաւ, էլ ընդունցից չեմ առնի»։

Դաւիթն ասաւ. «Ես քի չեմ առնի չունք էդ էրկու թագաւորը դան, ես էլ էնտուց հետ կռիւ անեմ։ Ասուած որ մէկիս գամաթ արաւ, ընտուրը կառնեա»։

Խանդուդ խանումն ասաւ. «Առանց կռուի ես քեզի առնում եմ, հրնչ ես էթում ես կռուի մէջ»։

Ասում ա. «Ամ ես առանց կռիւ քեզի առնեմ, ոդամարդ չեմ, գնա տունդ»։

Խանդուդ խանումը վեր ա կենում էթում ա տունը։ Խանդուդ խանումը էթում ա տունը, Դաւիթը պառկում ա, քնում ա, չուր չուար բացում ա։ Հինում ա, դալում են ասում են, թէ թագաւորը քեզի դանչում ա։ Համա Խանդուդ խանումն ա դանչէ։ Դաւիթը էթում ա Խանդուդ խանումի կուշտը, վեկայում ա ասում ա, թէ Խանդուդ խանում, հնչի ընձի խափնցիր, ասիր թագաւորն ա դանչում։

Էն էլ ասում ա. «Ես գինում ի դու չիր գա, ընդու խամար, որ Էրկու թագաւորն էլ, Լոռայ Համզէն, Շապկով Խորասանին, էկած են»։

Էն էլ ասում ա. «Էկած են, բարով են էկած»։

Վեկայում ա ասում ա. «Ճարի դու հնձի առ, ընդունց չթողում կռիւ անեն, մեզր են»։

Դաւիթն ասում ա. «Սատունայ չունք կաղդուան յիրեք ամառուան ճամբաթ իմ անուն հնկէ դուս, ես առանց կռիւ չեմ ճնայ»։

Վեկայում ա ասում ա, թէ էտենց ա, թագաւորը քեզի դանչում ա, ես ուզում մի կռիւ չրինի։

Էն էլ ասում ա. «Զէ, կէթամ որ կէթամ»։

Հէլաւ գնաց, ընտունցը բարև տուէց։ Էտ մարդիկ բարևն ա-

ուն։ Ակի չյիմացաւ թագաւորն թէ Դաւիթը հուստա՝ հա հուստ չէ։ Արաս Միրզէն խարցրեց. «Զահիլ ջան, հուստ ես»։

—Ես Սասնայ եմ, ջոջ Մհերի թոռ, Արամէլիքի էլ ազգն եմ։

Էս մարդերին պատիւ տուին։ Բերեց գինին լցեց բաղիկը դրեց յաուէջները. գինու թասն էլ դրեց կշտները։ Գորգէն էլ կայնաւ դռան կուշտը, Խանդուդ խանումն էլ կայնաւ սալանը (հաշտը, դռան յետև)։

Խանդուդ խանումը ասում ա. «Գորգի ջան, մուդաթ կայ Դաւթին ֆնաս չաան, զարիր ադայ ա»։

Էտոնք բերեցին թասերը գինի լցին, յիրար տուին. էկաւ Դաւթի արէն, պտի տան Դաւթին։ Դաւիթը ասաւ. «Մէկ խմեմ չեմ կշտրնայ, էրկու խմեմ չեմ կշտրնայ, հինի վեց օխտ թաս՝ անխամ գլնի, ամոթ ա», բաղիէն դրեց բերնին ու խմաւ։ Մախլուխը ոխակալուան վրէն. թէ ինչպէսա մարդ ա, թագաւորների յաուէջը բաղիէն դրեց բերնին խմաւ, պէտք ա գլոխը կտրենք։ Էնաեղ քաւոր Գորգին ասաւ. «Սանհէր Դաւիթի, ֆնաս ատուն ա»։

Դաւիթը ճչաց, մէկի ոտից վեկայեց տփեց էն մէկէլի գլխի վրէն, մէկէլները թողին փախան։ Խանդուդ խանումը ու քաւոր Գորգին էկան Դաւթի ձեռը բռնին առան գացին։ Գնաց, խելքն էկաւ գլոխը, խմերէր քէֆովցեր էր, գնաց պառկաւ քնաւ։

Էսի թո քնի։ Լօռայ Համզէն, Շապկով Խորասանին էկան թագաւորի մոտ գանգատ, թէ սարի ֆանուարը դու հնչիր բիրում էստեղ կապում՝ որ մեզի ֆնասեց։ Էն էլ վեկայեց ասաւ. «Էտ իմ արուեստը չէ, Խանդուդ խանումի արուեստն ա, ես չեմ գինում հուստ ա, հուստ չէ»։ Ղանչին Դաւթին, բերին դիւան։ Ասին. «Դաւիթ, դու էս ինչ օյին խանիր մեր գլոխը»։

Ասում ա. «Մենք էկեր ենք խօսալու համար։ դու բերիր գինին դրիր յաուէջ, խմայ քեֆոֆցայ, ընձի մեղք չունեմ։ Արաս Միրզէն խարցնում ա, թէ դու հնչիր էկէ։ Էն էլ ասում ա, թէ էկեր եմ քու ազջիկդ առնեմ։

Ասում ա. «Էտի իմ բանը չէ։ ազջկայ բանն ա, վոր մէկին կառնի, թո առնի»։

Էտ թագաւորներ կասին. «Մենք եկեր ենք կռիւ անենք, որ մէկս յաղթայ՝ էնի առնի»։

Դաւիթը վեկայնում ա ասում ա, թէ թագաւորներ, ընձի դոշուն չունիմ։ դուք դացէք կռիւ արէք, որն յաղթեց նոր ես ընդու խետ կռիւ կանեմ։

Էտ մարդիկը հրնում են էթում են կռիւ անելու։ Էթում ա, Դաւիթը Խանդուդ խանումի կուշտը, «Խանդուդ խանում, ես էլ եմ էթում կռիւ, դու հրնչ ես ասում»։

Էն էլ ասում ա. «Ես չեմ ուզում գու էթաս կռիվ»։

Ասում ա. «Իմ սիրտը մի արուն դարձու»։

Ասում ա. «Հնչա արուն գառնում քո սիրտը. շատ որ արիր՝ շահարը կը բրդեմ»։

Թանգուդ խանումը վազում ա իր կուշտը, ասում ա. «Դու մէ բան անես, Դաւիթը կռիվ չէթայ»։

Կ'կանչայ Դաւթին կը տանայ. կասայ. «Ծարի ծուռ ծուռ մի հլնի, իմ աղջիկը քեզի առնում ա, ես խաբար կանեմ էնգոնք էլ կռիվ չանեն»։

—Ա՛յ հայ, Դաւիթն ասաւ, իմ տղամարդութուն փչամ, իմ տղամարդութուն կտամ մէ թիկ յաշկի (կնոջ գլխի շոր)։

Էտի գլնի կեթայ Թանգուդ խանումի կուշտ, կասայ. «Թայամիշ արա, էթում եմ կռիվ, գլնի որ էնգոնք ընձի սպանում են»։

Թանգուդ խանում յինքն յիրան կթայայ ձիան ուտի վրէն, կասայ. «Վերև Աստուած, ներքև գու, ծուռ ծուռ մ'յելի (մի յինի) մի գնա»։

Ասում ա, թէ էնտոնք էրկ էրկու խազար ջան՝ կանայ չորս խազար ջան, կարելի ա ընձի սրպանին, իմ ջանդակ մի թող արնի յէրես, յարի իմ ջանդակ տար խորա։

Էն էլ ասում ա. «Ես ինչով ճանչնամ քո ջանդակը էտ չորս խազար ջանի մէջ»։

Դաւիթը թիկունքը բանում ա, որ մսէ խաչ կար, ասում ա. «Էնտով գու ընձի կը ճանչնաս»։ Հլնում ա էթում ա կռիվ։ Էթում տընում ա սար մէջ տեղ, էրկուսի գոշունը առած յիրար, ջարդում են։ Ղանչայ Մարութենի Մայրամ Աստուածածին, թուրը կառնի ձեռը կը տայ մէջները, բիրտան կը բրդայ, էրկու թագաւորի գոշունն էլ կը կտրայ։ Էրկու թագաւորի գլխների քաքույները կը կապայ յիրար, կը թայայ ձիան դաշը, որ բէրայ տայ անտերին։ Ընտուց կրտենայ որ մէկը տղամարդի շորեր խագէր ա, մզրախն էլ առեր ա ձեռը, գանում ա ջանդրկին բանցրրցրնում ա թամաշա ա անում ա։ Դաւիթը չի յիմանում ա Թանգուդ խանումն ա։ Գալիս են յիրար կուշտ։ Թանգուդ խանումը ասում ա. «Մորվերես Լուսայ Համզէն, Շապկով Թորասանին գլխները կտրես, գոշունը ջարդես, թալ գետին կռիվ անենք։

Դաւիթն էլ կասայ. «Դու ինչ մարդ ես, որ ընձի ասես թալ գետին կռիվ անենք»։

Կասայ. «Մարդ եմ, էկեր եմ քո խետ կռիվ անեմ»։

Վեկալում ա ասում ա. «Էսքան գոշուն ընձի չդիմացաս, գու ինչ պրտի դիմանաս»։

Էն էլ ասում ա. «Որ չդիմանամ բսկի չեմ գայ քո խետ կռիւ անի»։

Դաւիթ գլխները թալեց գետինը, խասան յիրար, սրֆտա յիրար գիւրգ թալին, Դաւիթը գանեց, Ալանդուդ խանումը ոլորած հնկնէր ձիանից ցածր, ձեռը գանեց դոշի մէջը, վեկալեց Ալանդուդ խանումին տփեց գետինը, թուրը քաշեց որ վիզը կտրա, Ալանդուդ խանումը ձեռները տարաւ յիր դոշը բացեց, ասաւ. «Ախր ես Ալանդուդ խանումն եմ»։

—Վայ, Դաւիթն ասաւ, քու տունն աւերի, դու էտ ինչ աքեցիր, բալքի թրով գանում ի, վիզդ թռնում էր։

Էն էլ ասաւ. «Դու ընձի չասեցիր թէ յարի ջանդակների մէջից ընձի գթի, ես էլ հելել եմ էկեր եմ քո հավարին»։

—Հրնչի ոդամարդի շոր խագար. օղլուշադ իր, օղլուշադի շոր խանգնիր։

Էն էլ ասաւ. «Քո ոդամարդութունդ ջոքում ի» (փորձում էի)։

Հէլան թագաւորների գլխները թալին ձիան վրէն, էկան գրեց թագաւորը, բերին տուին թագաւորին. թագաւորն ասաւ թէ իմ աղջիկն էլ տուի քեզի, հալալ հրնի քեզի։ Բերին տարան ժամ պսակին։ Բերին մէտեղ տուեցին, Դաւիթ առաւ յիր կնիկը նրա։ Մէ ժամանակ հետց Դաւիթն ասաւ. Ցարի էթանք մեր հանը, Սասունը։

—Չէ, ասաւ, մաղի էս տես։

Ալանդուդ խանումը էրէխով հելաւ. ինը ամիսը թրմրմաւ, ինը սրհաթն (ժամ) էլ թրմրմաւ, էտուց մէ էրէխայ հելաւ։ Գաշեց էրկու սհաթ, ուստամօրն ասին, որ գայ պորտը կտրայ։ Ցառամէրն էկաւ, որ պորտ կտրայ, էտ էրեխէն ձեռ թալեց ուստամօր եախէն քաշեց քցեց յիրան վրէն։ Էտի վեժաց փախաւ, ասաւ. «Վիշապ ա, ընձի քաշեց ձենցս»։

Թագաւորն ասաւ. «Չէ, մեր թոռն ա, գնա պորտը կտրայ»։

Էրկու խոգով էկան էտ տղի թևերը բռնեցին, պառաւը պորտը կտրեց, տարան էտուրը հնուներ, հարցրեց անունը ինչ դնենք։ Դաւիթը ասաւ, «Գապիս անունը կը դնեմ, Մհեր։ Անունը դրին Մհեր։ Պախեցին, մէ էրկու տարի պախեցին էտուն, ջոջցրին։ Էս խետ որ ջոջեցաւ, գնաց հնկերտանքի հետ խաղ էր անում էր, վոր մէկին գանում էր, գլոխ, թև, մէջքը ջարդում էր։ Էլի էկը գանգատուոր հէլան թագաւորին, թէ քո թոռը մեր տղերքի քոքը կտրեց, էս ինչպէստ պրտի հրնի։ Արաս-Միրզէն դանչում ա Դաւթին, ասում ա. «Քո տղէն տես քեզա, խալխի տղէրքն հրմմէն ոպաներ ա»։

Էն էլ վեկալրմ ա ասրմ ա. «Մէ քանի հոդի գնենք խետը թո էթայ աւ անայ, որ շահարից կտրուի»։

Արաս-Միրզէն յիրան վեց տղէն գնում ա խետը, որ էթայ աւ անայ։ Մհերը խէծնում ա Ֆուռկէջալաթը էթում ա քեռիքի խետ աւ անելու։ Ամբ տանում ա պապի տունը, չի թերում ա խորը։

Մէկ աւ ժամանակ էտենց տանում աւ։ Մէկ աւուր մէկ օր խէրը ասրմ ա. «Մհեր ջան, մէկ աւ էլ քի, ես ուտեմ»։

Մհերը ինամ ա անում, հնկնում ա քիթ ու բերնի վրայ խաց չուտում աւ։ Դուիթն ասում ա. «Խանդուդ խանրմ, յէլի քաշի յիր տեղի վրէն թո քնի, չեմ ուզում էնտու աւը»։ Խանդուդ խանումը իշտա քաշում ա, չի կանում ա քաշայ քամկին։ Ասում ա. «Դաւիթ, բատուր չեմ կանայ յիրար տամ, յարի դու տար»։ Դաւիթը հլնում ա քաշում ա, շորերը պրծնում ա յիր վրայէն, յինքը չի պըրծընում։ Մնում ա ասում ա. «Ոչ ու փուչ մնանի յինքը, սոդն իմ դլոխը կուտայ»։ Էն իր տեղ պառկաւ, էն էլ տեղս աղղ մնաց։ Համէն որ քեռիքը Մհերին քնուկ տեղէն կը խանին կը տանին աւի, էտ յառաւոտն Մհերը գնայ քեռիքին խանեց, ասաւ. «Ձէլէր էթանք աւ անենք, որ էսօր հէրս աւ ա ուզում ա»։ Հէյան ձիանքը խէծան գացին։ Ջանը կէս ուրուան բոլ աւ արին, քեռիքը վեկալին ասին. «Մհեր ջան, յարի էթանք տունը»։ Մհերն ասաւ. «Ջէ, նստենք քէֆ անենք»։ Վերցրին ասին. «Մհեր ջան, ինչպէստ քէֆ անենք»։ Մհերը էրկու ծառ բերեց փակցրեց յիրար, տասաւ. «Ֆեռիք, յիրեքը էս ծառը խեծէք, յիրեքդ էլ էն»։ Ասին հնչի. Ասաւ. «Տրընկոզա խաղանք, էթանք»։ Էտենցը բերեց խաղցրեց։ Ասաւ. «Ֆեռիք, յարէք չուր ծէր»։ Ֆեռիքը էկան խէծան ծէրի վրէն, յինքը իջաւ ու ծառերը թողեց։ Ամա թողելուն, ծառերը յիրեքը արեմուտք, յիրեքն էլ արևելք թալեց։ Ձինքը հէլաւ իր աւը վեկալեց, հընկաւ ճամբախ էկաւ. մէրը «թոխի կտուրն էր, յիրիշկաց տեսաւ որ Մհերը գալրմ ա, աղբրտանքը չկան։ Ասում ա. «Դաւիթ, Մհերը գալրմ ա, իմ աղբրտանքը չկան»։ Վեկալրմ ա ասրմ ա. «Մհերի ձիան հետ քո աղբրտանքի ձինը չի գալ, էնի խրնդէն ա»։ Մհերը գալում խասնում ա խոր մոտը ասրմ ա. «Ամ քեզի աւ, յրմմէն օր աւ, աւ, աւ, յէտա բերեցի քո աւը»։

Վերցնում ա մէրն ասրմ ա. «Մհեր ջան, քո քեռիքդ յուր են»։

Ասրմ ա. «Ֆեռիք յիրեքը Կապուտիդը ատմեերը չայկրաում ա, յիրեքը Սասուն»։

—Վա՛յ, ասաւ, իմ տունը քանդուաւ, չիսերածը (չը խերուի իր արևուց) իմ աղգրտանքին բսպաներ աւ

Մհերը յետ ա դառնում ա, էթում ա պապի տունը։

Դաւիթը ասրմ ա Խանդուդ խանրմին. «Իմ յիրեսը չրռնայ

որ անտրի յէրեսին առնի, Մհերն էլ թո Ճայ էն վեցի բաղալը, հէլի էթանք մեր երկիրը»։

Մէ ձի Դաւիթն ա խէնում, մէկն էլ կնիկը։ Ահա, յիրանք բեխարար էթում են։ Էթում են Սասուն։ Կապուտկողը, Կապգուանը, Ղլաթը, Մարը յրմմէնով վեկալած են գոշունը բռնած են ճարի (ճանապարհ) դէմ, կայնած. տաս հազար հոգի, որ Դաւթին բռպանեն, հայի (վրէժ) խանեն, չունք Մարամէլիքին բռպաներ ա, չունք որ էկեր ա Շիմշիկ խաթունին սիրեր ա, Կապուտկողը քանդեր ա, էլը տարեր ա, Կապգուանի էլլիկի տղերքին յրմմէն Մհերը սրպաներ ա։ Կապգուանայ դէմն ու Մարայ դէմը բաղան են քաշած են, որ Դաւիթը չկանայ հնցնի էթայ Սասուն։ Դաւիթն ու կնիկը էկան խասան էդ գոշունին և էլ բռգանին։ Խանդուդ խանումը ասաւ. «Ես մգրաղի ձէրով բաղանը քանդեմ, դուն էլ գոշունը ցարդայ»։

Էնի բաղանը քանդեց, էնի գոշունը ցարդեց։ Ճիրար խետ հէլան Ղլաթայ դուռ էկան։ Ղլաթայ որ դուռ էկան, տեսան, մէ ջահիլ թոռուն տղայ ձինը խեծե, տասը ձիաւորի խետ կայնէ կարմրնցի վրէն։ Էտոնք էկան Դաւթի յատէջը կտրին, ասին. «Դուր ուրն իք»։

—Ինչ ես խաբցնում, Դաւիթն ասաւ, ես որը կհրնեմ կհրնեմ։

«Չէ, ասըմ ա, ատէք աենանք, հուստ էք»։

Դաւիթն ասում ա. «Սատնայ եմ»։

Ասում ա. «Պրտի էստեղ ես քո խետ կռիւ անեմ»։

Ասում ա. «Դու ինչ ես, որ իմ խետ կռիւ անես»։

Ասում ա. «Ես պըտի անեմ քո խետ, ինչ հրնեմ հրնեմ»։

Դաւիթը մհայ (լսելիք) չանայ, կասայ. «Ես քո խետ կռիւ չեմ անի. դնա մէկ ասա հազար ձիաւոր բէ, որ ես քեզի խետ կռիւ անեմ»։

Կասայ. «Ես ատսը հազար ձիաւոր բերող չեմ, ես էլ պակաս մարդ չեմ, ես մենակ քո խետ կռիւ պըտի անեմ»։

Դաւիթը կը վեկալայ կասայ. «Իմ կուշտ արդ (կնարմարդ) կայ, տանեմ Սասուն, յետ գամ կռիւ անենք»։

Ասում ա. «Քո կուշտ համայիլ կայ, յարի համայիլով յորթուայ որ գաս»։

Դաւիթը յիր մտքով ձախ ծոցի վրէն կը յորթուայ։ Համայիլը աջ ծոցից էկաւ ձախ ծոցը, աջ ծոցը սեցաւ։ Հէլաւ գնայ տուն։ Համէն յայքալուսէք տուին Թորոսին, թէ տղէտ առաւ կնիկը էկաւ։ Մախլուխը զարմացան Խանդուդ խանումի վրէն, ասին էս տեսակ էլ ողուշաղ գլնի։ Քեռի Թորոսը Դաւթին ասաւ. «Քեզ էլ դուրբան, քո կնկան էլ, որ էս ցուսա ողուշաղ ա»։ Դաւիթը յիրեք ամիս

ժամանակ էր տուէ որ էթար կռիւ. յիրեք ամիսը քաշեց մէ տարի։ Քեռի Թորոսը տեսաւ Դաւթի ծոցը սեցեր ա, ասաւ. «Օղուլ (որդի), սուտ ես յօրթրուացէ»։

Ասաւ. «Քեռի Թորոս, մէ ջահիլ տղայ, համա աղջկայ թուսպուրը, կայներ էր իմ խետ ուզում էր կռիւ անէր, ես յորթվացի համա սրտիս չէր էթի կռիւ, համա սեցեր ա ծոցս»։

Ասաւ. «Որդի, մի գնա կռիւ։ Քո մուխ առաւ քարը, էլ դու չես կանայ էթայ կռիւ, սուտ ես յորթրուացես»։

Հէլաւ, յինքը յանկաջ չարաւ, խէծաւ ձինը գնաց։ Գնաց էտ ջահիլ տղի հետ Դաւիթը կռիւ անէ։

Հէլաւ գնաց Ղլաթայ արանքը ու մէկ էլ Վանայ, տեսաւ որ մէ ջահիլ ադայ գէնը գայրում ա. էկան, Դաւիթն ու էտ ջահիլ տղէն յիրար բարև չտուին. էն ինչ որ Դաւիթն ա՝ խայի գէյին ա տենք, էն ինչ որ ջահիլ ադէն ա՝ կոտապաշտի գէյին ա։ Դայրում են ջիստով առնում են յիրար, կռիւ են անում են։ Յիրեք օր, գիշեր ցերեկ կռիւ են անում են, անահուն կանանչ փչացնում են։ Դաւթին զանում ա տղէն գրգով քցում ա, որ հրնկնում ա՝ թուրը քաշում ա որ մորթայ, Դաւիթը ասում ա. «Դու որ բնձի մորթում ես, իմ բաջի ձեռնէն իմայ պտի պրծնես»։

—Քո բաջը ծրն ա, խարցնում ա տղէն։

Ասում ա. «Ամանդուդ խանրմն ա»։

—Էնի խո իմ մէրն ա։

«Դու Մհեռն ես»։

—Կասայ. Դու էլ Դաւիթն ես։

Կասայ. «Դու որ Մհերն ես, էս ա յիրեք օր բնձի հրնչի իր չարչարում. ես էն Ասածուց կը խնդրեմ, որ կերպած քարի մէջ մնաս, որպեսզի յիրեք նշխար քո խորակը հլնի ուտես, չունք Քրիստոս գայ դադաստան քեզի մահ չինի»։

Ամոթու Մհերը ետ դարձաւ գնաց պապի տունը։ Դաւիթն էլ գնաց Ղլաթը։ Ղլաթը գնաց, էն ջահիլ տղի խետ կռիւ արաւ։ Էն ջահիլ տղէն չկարցաւ դիմանէր, փախաւ մտաւ դամշի մէջ։ Դաւիթն ասաւ. «Էսենց ջուր չրինի, եաւաշ ձինս լուամ»։ Տկլոզցաւ, համայիլն խանեց, խամրուրեց, դրեց շորերի վրէն, յինքը մտաւ ջուրը ձինը լոգկրցրեց։ Էտ տղէն նետը դեղեց ու թիկունքին զանեց։ Դաւիթը բռնաց։ Բռնալու բիմին էն տղէն տեղն ու տեղը մնաւ։ Ձէնը գնաց Սասուն, ասին, վայ վայ, Դաւթին ըսպանին, Դաւթի ձէնն էր։ Հէլան վեց ախպրով, քեռի Թորոսը, էլլիկով, մէ խարիբ խոզի գացին։ Գացին տեսան, Դաւիթը շորերը թալէ թիկունքին, պտրտում ա, ասին. «Դաւիթ, էտ ինչ ա ուրթէ քի (պատահել)։

Կասայ. «Իմ սպանողը էտ ա դամշի մէջն ա, մէկ գայէք տեսէք»։

Կիթան տեհան որ ոդի շորերով մէկ աղջիկ ա, մեռեր ա։ Կը տեսնան, որ էտու յաչքեր շուշայ յաչք ա, կասեն. «Դաւիթ, կասեն, աղջիկ ա, յաչքերն էլ շուշայ ա»։ Կասայ. «Էտի ինձնից ա, Շմշիկ խաթունի աղջիկն ա, դէհ, կասայ քաշէք բերէք իմ յաչքը առնի էտուն»։ Կը բերեն. «Օխայ, ասում ա Դաւիթը, ջանս խոցցաւ, դու ընձի սրպանում իր, դու ընձնից շուտ մեռար»։ Յետոյ կասայ. «Մէկ էս նեստը քաշէք խանէք իմ թիկունքէն»։ Որ կը քաշեն, կասայ. «Ես դինամ, էս իմ մեռնելու ժամանակն ա, ընձի կը բառնաք դաւի վրէն, ձեռս կտիս թողէք»։ Փիչ կենցնի, Դաւիթ խոցին կտայ։ Բերին թապութ շինին, մէկը աղջկան, մէկն յիրան։ Ջիտով դանին դաւի կողը, մէկն էս հան, մէկը էն։ Աջ ձեռը թողին բայ, էկան ճամփի մէջ տեղը, մէ բաղրկան էկաւ ուստ. խարցրեց թէ էտ ինչ թապութ ա դաւի վրէն։ Ասին. «Դաւիթն ա»։ Շատ դէմ հնկաւ, ասաւ. «Ափսոս, Դաւիթ, որ մեր հրկրից դուրս էկաւ, փչացաւ»։ Մրշկրները խարցրին, ասին, թէ բա էտու ձեռն ինչի՞ ա թապութից դուս։ Ասաւ, թէ էտու միտքն էն ա, թէ աշխարհ էսէնց էկաւ, էսենց էլ գնայ իմ ձեռու մէջ։ Առան դային ճամբի մէջ տեղ, չորս վերստ տեղ մնայ։ Ջէնով Օհան վագաւ, Խանդուդ խանումը տանիսն (կտրանն) էր, ասաւ. «Ջան ախպէր, Դաւիթը սաղ ա, իմալ ա»։ Ասաւ. «Մեռնի բաշ (կինը) ապրի բուդէն (այրը)»։ Ասաւ. «Ա՜յ հայ, Դաւիթի յեռեր էստոնը ընձի պահոդը չենն», յինքը տանրսից գլխի վրէն թողեց, հնկաւ քարի վրէն, ջարդ ու փշուր հէլաւ. ծծերից էլ կաթ էկաւ։ Քաշին տարան տուներ։ Դանք դրիս Դաւիթը։ Դաւիթն առան էկան, բերին տեսան որ խարսն էլ ա մեռէ։ Քեռի Թորոսը շատ դէմ հնկաւ, ասաւ. «Իմ տղէն մեռաւ, իմ խարսն հնչի մեռաւ»։ Ապիրը վեկտին ասին. «Ջէնով Օհանի աթութքն էր»։ «Փչանայ Ջէնով Օհանը», ասում ա քեռի Թորոսը։ Բերում են պատարագ անում են, յիրերին էլ խորում են։ Քեռի Թորոսը ասում ա. «Մեր խարսից ու մեր տղից թէ տղայ հէլէր ա աշխարհք կը բրգայ»։ Խանդուդ խանումի կուշտ չորս օղուշագ կայնուկ ա հէլէ. ասում են. «Էտու ծծերից կաթ խուլեց»։

—Էմալ ա, կասայ քեռի Թորոսը, էտուց էրէխայ հէլիր ա, պրտի էթանք բերենք։

Քեռի Թորոսը վերցնում ա Ջէնով Օհանն ու էթում ա։ Մէ գոմշի կուշի, մէ ժնեթի էլ թալում ա ձիու վրէն. ասում են հրնչի ես թալում, ասում ա տանեմ Ջէնով Օհանի բոլորը փոխթեմ, որ բոլայ չճգուի։ Հէլնում են, էթում են, կաղզուանայ գուս են հրլնում են։ Ջէնն էթում ա Արաս-Միրզին։ Ասում են. «Քեռի Թո-

բոան էկաւ։ Էն էլ ասում ա. «Էկաւ թոռը կը տանայ, բերէք օխտը դանէն ներս գէրգամին տանենք, պահենք, նազարէն կլտին գարիքուի, որ խօրոդրօր ձէնը յինքը չլսայ, որ դուրս հէնի»։

Քեռի Թորոսը էկաւ կայնաւ ասաւ. «Մեր էրեխէն աուր տանենք»։

Արաս-Միրզէն ասաւ. «Էրեխայ հէւատ ա, որ տանք»։

—Իմ հարան ասում էր կար, ասաւ, քեռի Թորոսը։

Էն էլ ասաւ. «Օդորթ ա կար, համա մեռեր ա»։

«Բանի տարեկան էր, որ մեռաւ» խարցնում ա քեռի Թորոսը։

Ասում ա. «Յիրեր ամսական էր»։

—Դու գաս իմ թոռի գերեզման ընձի տաս նշանց։

Տարաւ մէ գերեզմանի տուեց նշանց։ Քեռի Թորոսը չափեց՝ մէ շէնք հէլաւ։ Ասաւ. «Էս իմ թոռի գերեզմանը չէ, սուտ էք ասում, իմ թոռը ամիսը մէ տարուայ գեղում ցոցրնում ա, յիրեք շէնք ցոցրցած պտի հէնի»։ Վէկայից ասաւ. «Էս էլիկի մեզքը մի քաշա, Արաս-Միրզա, տու իմ թոռը տանեմ»։ Արաս-Միրզէն կայնաւ չտուեց, ասաւ. «Սուտ չեմ ասում, մեռեր ա»։

Ջէնով Օհանը ասաւ. «Հէսա ես բոլում եմ, տես ինչ գտայ ձանդը ոտը կնիկ կայ՝ յանցուցը կանայ, ինչ գտայ հալիւոր կայ՝ կը մեռնի, ինչ գտայ պաւվրներ կայ՝ կը մեռնի, մատակը կը ձագոտի, կովը կը հորթիկտի, ձինը կը քուռկիտի, յարի էատոնց մեղքի տակ մի հնկի, բե մեր թոռը տուր տանենք»։

Տենում ա որ թազաւորը չի տալում, վերցնում ա գոմշի կաշին փաթթում ա մէջքին, որ փորը չեղուի զօռից, բնատով էլ (շղթայ) փաթթում ա, ու մէկ նարայ ա քաշում (ճչում է)։ Նարայ քաշելուն պէստ՝ ձէնն հկնում ա Մահերի յանկաջը. «Յուս, ասում ա, տուս, էս իմ խօրոդրօր ձէնն ա»։ Ասում են. «Ղուրբան, քո խորոդրէրը գոր ա, վեց ամիս զատ ա»։ Մէկ էլ ա նարայ քաշում. էլի հնկնում ա Մահերի յանկաջը, ասում ա. «Վալլահ էսի իմ խօրոդրօր ձէնն ա»։ Էլի էտոնք քոչամոստում են, ճիժ ա բոլում ա, հուստ ա խօրոդրէրդ էատեղ։ Էլիկը բիրդան գալում են գանգրտաւոր, ասում. «Թազաւոր, էտ ինչ հանիր մեր գլոխ, էն ինչ խալիւորն ա, խալիւոր մեռաւ, էն ինչ պաւաւն ա, պաւաւ մեռաւ, էն ինչ էրեխով օղլուշաղն ա, էրեխէն թալեց, էն ինչ որ մատակն էր, յինքը ձագոտաւ, էն ինչ որ կովն էր՝ հորթիկտաւ, էն ինչ որ ձին էր՝ քուռկոտաւ»։ Ջէնով Օհանը ասաւ. «Գանգրտէք, չգանգրտէք, էս մէ բերանն ա մացէ, ես պրտի բոլամ»։ Մէկ էլ բոլաց։ Ինչ բոլալուն, Մահերը նազարշին տփեց գուռնաչաւ գլխինը, էն էլ փշացաւ, էն է. խայտաշ տղերքից որը մէկը հնկաւ ճանկը, տփեց պատը ցխեց, գուռը քաշեց ճղնախան արաւ, հէլաւ դուս, յաչքերը

բակ տուեց, ուր տարեկան դոմշի պէս ինչ որ թէ լցուաւ, էկաւ քեռի Թորոսին գրկեց։ Քեռի Թորոսն էլ էտուն գրրկեց։ Մհեր ճխտեց, քեռի Թորոսի կողրանք կպաւ յիրար, լիգուն լալիուաւ, ջուրն գանին յէրեսը, պօրտն օլօրին, ոյամիշ հէլաւ, ասաւ. «Ոչ ու փուշ մեռնի քու պէստ տղէն»։

Վերցրին ասին. Հնչի։

Ասաւ. «Իմ կողրանքը ճխտեց ջարդեց»։

Արաս-Միրզէն ասաւ. «Բա ես իմալ ի, վեցը տղիս ըսպանեց»։

Ասաւ. «Ես ինչ անեմ, քու թոռն ա»։

Ասաւ. «Հէրը վեցի փոխնակ էտի տուէ ընձի, էկար դու տանում ես. Մհեր ջան, իմ աղ ու հացը քեզ հալալ հլնի»։

Քեռի Թորոսը հալալամիշ հէլաւ Արաս-Միրզի խետ, առաւ Մհերին հելաւ դուս։ Վեկալեց ճամբի մէջ տեղը Մհերը խարցրեց. «Քեռի Թորոս, իմ հէրը ո՞րտեղ ըսպանեցին»։

Էն էլ ասում ա. «Ղլաքայ մէջը ըսպանեցին»։

Ասաւ. «Ո՞րն ա ըսպանէ»։

Ասաւ. «Միրոզի աղջիկը։ յինքը սիրոզ ա արէ Շիմշիկ խաթունի հետ, էնաու աղջիկը»։

Վեկալեց ասաւ. «Քեռի Թորոս, Հացն ու գինին, Տէր կենդանին, էստուց բրդելով պտի էթամ»։

Ասաւ. «Ինչով կբրդես»։

Ասաւ. «Ըստուց մէ թուր ու գիւրզ կառնեմ բրդելով կէթամ»։

Ասաւ. «Դու չես կանայ էթայ բրդի»։

Ասաւ. «Էրնչի՞»։

Ասաւ. «Քու հոր թուրը, գիւրզը, քամանը, թաքը, համայիլը Մարութենի Մայրամ Աստուածածինն ա»։

— Համա ի՞մալ գըլնի, էթանք բերինք։

Ասաւ. «Չէ, ասաւ, չըլնի էտէնց, քանի հաու անձին էրինչ սանինք, դհանայ տանինք, էլլիկը գայ, պատարաղ անենք, նոր դուռը բացուի, մոնես մէջը սիթա թաքը դնես գլոխդ, քամարը կապես մէջդ, չարմէքը խադնես ոտդ, համայիլ դնես ձեռդ, գիւրզը առնես ձեռդ, խնծնես Բիւռիէջալաթը նոր գլնես տղամարդ, էթաս կռիւ անես, քու դուշմանը բրդես»։

Նոր կը գան մատուղը կը վեկալին, դահանէք կը դանչին, ժողովուրդ կը դանչին, կէթան Մայրամ Աստուածածին, (տայ մուրադրդ), էրինչները կը մատղին, պատարագը կանեն։ Մայրամ Աստուածածնայ դուռը կը բացուի, Մհերը չորէչոր կէթայ յիրեք խետ կը խամբուրայ, թաքը կը դնայ գլոխը՝ չի մոնի, կասայ. «Քեռի Թորոս, էս հնչի իմ գլոխս չի մոնում»։

Կասայ. «Որդի, հինչ քի եմ տեսէ՝ զարմացեր եմ։ Քամարը

կը կապայ՝ չիսանի, շաքմէքը կը կոխայ ոտները՝ չմտնի, համայիլը կը դնայ ծոցը, գիւրգը կառնի ձեռը, կասայ. «Մէ խալվար զօղոշում էստու գլոխը հլնէր, ես էլ ոդամարդ դուս կրգի»։ Քեռի Թորոսը կասայ. «Փշանաս դու, ինչ քեզի տեսայ, քո քամին էլ մեզի կը փչացրնայ»։ Էն տեղ Մհերը թուրը կը թալայ թեր, «Բերէք իմ Քուռկէջալաթի, բերէք, ձէն կտայ։ Բերէք իմ շաշփանու զալխան, (հնգեմատնանի վահան), բերէք, աշխարք բրդէք, իմ խօր հայիվ խանէք, դուշմնի արուն խմէք, որ իմ սիրտը խոփնայ»։

Հէլաւ դուս, բերին Քուռկէջալաթը։ Քեռի Թորոսը բռնեց գլոխը, թուրն առաւ ձեռը՝ չինարի ծառը կայնուկ էր, ասաւ. «Քեռի Թորոս, ես կոխ։ չեմ արէ, սրֆթա էս ծառը կտրեմ, թէ իմ թուրը էս ծառը կտրեց, կը կանաչի քամակը իմ հօրն ու մօրը, թէ չկտրեց՝ չորնայ»։ Թուրը թալեց, ծառը կտրաւ կայնաւ քոքին։ Ասաւ. «Իմ հօր մէջքն էլ կոտրի, իմ մօր մէջքն էլ, իմ թուրը չկտրեց էս ծառը»։ Տեսաւ որ քամին գանեց ծառն հնկաւ։ Ծառն հնկնելուն փառք տուեց Աստուն, ասաւ. «Ինչ մէջքն էլ կանրշնայ՝ մօրս էլ»։ Հէլաւ խէնաւ ձիներ, գանեց Մարութենի Մայրամ Աստուածածինը, գնաց սրֆթա պապի շահարը կտրեց, յետեւ էկաւ Մրսրը կարեց, էկաւ Կապուտկոդը կտրեց, էկաւ Ղլաթը։

Ասին. «Քու հօրը Ղլաթն ա սպանէ, էստա մախլուխ հընչի բրդիր, էստա մարդու արունը հնչի մտար»։

Ասաւ. «Իմ խէրն կաղդուանայ հէլե, Արաս Միրզէն ա հէլե սարիր, ընտու համար էտուն սպանի. մեր ջոջ դուշման Մրսրն ա, ընտուն էլ էնենց բրդի. Քեռի Թորոս ասում էր, Կապուտկոդայ ջուրը շատ գօրեղ ա, շատ մարդու ֆնաս կը տան, ընտու համար էնտունցը սրպանի. Ղլաթը Շըմշիկ խաթուն հօրս խարեց տարաւ կուշտը, որ յիր ժառանգն հէլաւ խորս բսպանեց։ Ղլաթն էլ բրդեցի, մէ կատու մնայ»։

Կատուն հէլաւ ծառի գլոխ, Մհերը գանեց, էն էլ բերեց ցած։ Էլ գետին էտու ձիու ոտների տակը տայանմիշ չէր հլնում, չունք չոքերը խրթնում էր։ Միրիշկաց աեսաւ Ղլաթայ վիրեը մէ սար կար, գէմ արաւ էտ սարը, հէլաւ սարի գլոխը, խարցրեց՝ «Էս ինչ սար ա»։

Ասին. «Էսի կեռպած քար ա»։

Ասաւ. «Եաւաշ քաշեմ իմ ձինը էս քարերի վրէն, գետինը հանդարտի, որ էթամ ջարդեմ»։

Ասուս հրամանքով կեռպած քարը էկաւ վրէն դապ (աման) հէլաւ կայնաւ։

Ջանք հիմի էլ կայնուկ ա, յիրա մարմնի մագը հէյէ յիրան ծածկեր ա, ոխտը կանգուն գոշի լէնքն ա, սուրը Յարութենի

օրը, բարի լուսի խեստ դուս ա գալիս հէրից։ ապօթում ա, օխտը չէնք գաղնում ա յիր տեղից։ Ջինը քաշում ա դուս, ձիու ոտնե-
րի տակը գետինը տայանմիշ չինում ա, էն վախտը որ յիրեք սրտաթը թմրում ա, գալում ա նեռ, հրաման չունի յէվելի
մեայ. էն վախտ հէրի դուռը փակում ա. յիրան ուտվածքը օրա-
կան յիրեք նշխարք ա, էրկու կուշտը մէկ մէկ ժամ վառուկ ա,
գիշեր, ցերեկ։ Ջինը շռում ա, հէրից դուս ա գալիս։ Ջիան
եանցէն յատէն ա, ամոռ ձմեռ կանանչ ա.

Ե. ԼԱԼԱԾԵԱՆ

1. Ջաւախքի բարձունք		25 կ.
2. Ջաւախք	1 ր.	— »
3. Վարանդա	1	— »
4. Միսխան.		80 »
5. Զանգեզուր		50 »
6. Գանձակի գաւառ. Ա. և Բ. հատոր.	1 ր.	60 »
7. Բուլանրի (Նիւթ՝ հատուած է Բէնալէն).	1 ր.	50 »
8. Մոլլա-Նասր-էդ-դին		25 »
9. Հորոս.		5 »
10. ՍԱՍՄԱՅ ԾՈՒԵՐ		25 »

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

11. Բարչալուի գաւառ
12. Նախիջևանի գաւառ
13. Շարուր—Դարալագեազի գաւառ
14. Նոր Բայազէտի գաւառ